Ազգ
Azg
18 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 212 (4592)
ISSN: 1829-1651

# Ամենաբարձր մակարդակով «հայ-ռուսական»

## Այսօր Մեդվեդեւը կմեկնի Բաքու

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Ռուսաստանում հայտնի քաղաքական գործիչ, բեւեռախույզ Արթուր Չիլինգարովը նոյեմբերի 17-ին ՀՀ նախագահին հանձնեց Հյուսիսային բեւեռում ծածանված հայոց եռագույնը: Ի դեպ, հյուսիսային բեւեռում ծածանվել է նաեւ Ռուսաստանի հայերի միության դրոշը, որն էլ կրկին Չիլինգարովի ձեռքերով հանձնվեց Միության նախագահ Արա Աբրահամյանին: Ռուսաստանի հայերի միության 4-րդ համագումարն ընդունած դահլիճը ծափահարում էր «բեւեռ նվաճած» ՀՀ պետական դրոշին...


PRESS OFFICE OF THE PRESIDENT OF ARMENIA

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա գալաերեկո, Ռուսաստանի հայերի միության 10-ամյակի միջոցառումների շարք եւ հանդիպումներ ՌԴ նախագահ Մեդվեդեւի ու վարչապետ Պուտինի հետ. Հայաստանի նախագահի՝ նոյեմբերի 16-18-ը Մոսկվա կատարած աշխատանքային այցի օրակարգը հենց այսպիսին էր: Ի դեպ, Մոսկվայում է նաեւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, որը նոյեմբերի 16-ին նախագահ Սարգսյանի հետ մասնակցեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի գալաերեկոյին: Մինչ այդ երկու հայկական պետությունների ղեկավարները Մոսկվայում հանդիպումներ են ունեցել Ռուսաստանի հայ գործարարների եւ բարերարների հետ:

Ինչպես տեղեկացնում է ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունը՝ «Նախագահ Սահակյանը կարեւորել է Ռուսաստանի մեր հայրենակիցների դերը Ղարաբաղի զարգացման գործում՝ ընդգծելով, որ այս անգամ եւս ակնկալում է նրանց ակտիվ մասնակցությունը Արցախի առջեւ ծառացած կարեւորագույն խնդիրներից մեկի՝ խմելու ջրի հարցի լուծմանը: Այդ հարցն ունի քաղաքական, տնտեսական եւ սոցիալական նշանակություն, եւ դրա լուծումը մեծապես կնպաստի Արցախի Հանրապետության զարգացմանն ու զորացմանը»:

Տես էջ 2

# Աստանայի փաստաթուղթը՝ կոնֆլիկտների մասով «բարդություններով»

Աստանայում դեկտեմբերի 1-2-ին կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովից ակնկալիքները այնքան են խտտացվում ու մասնիկացվում հանրությանը, որ ակնհայտորեն խնդիրներ են ծագելու իրականացնելու այդ ակնկալիքները: Դրանցից մեկն էլ ղարաբաղյան հարցի առնչությամբ ինչ-որ առաջընթաց ունենալու սպասումներն են, որոնք ստեղծվում ու սնվում են տարբեր պաշտոնյաների, լավագույն դեպքում՝ լավատեսական, եթե չասենք՝ հիմնազուրկ, հայտարարություններից:

Որպես կանոն որեւէ փաստաթղթի ստորագրումը կամ նման մի իրադարձության պատրաստումը գրեթե երբեք էլ չի ուղեկցվում հայտարարություններով, ուստի որեւէ բան ակնկալել Աստանայում կայանալիք գագաթաժողովից առանձնակի իրատեսական չէ: Մյուս կողմից, զուտ հանդիպումների եւ այդպիսով բանակցությունների ընթացքի պահպանման կարեւորությունը չանտեսելու մոտեցման առումով հստակ է, որ այդօրինակ հայտարարությունները գործընթացի մաս են կազմում:

Ինչեւէ, ԵԱՀԿ գործող նախագահ, Ղազախստանի արտգործնախարար Կանատ Սաուդաբաեւը հերթական այդպիսի հայտարարությունների շարքին եւս մեկն է ավելացրել՝ ԵԱՀԿ մշտական խորհրդում ելույթ ունենալիս նշելով, թե գագաթաժողովում քննարկելու եւ ընդունելու համար պատրաստվող փաստաթղթի բանակցությունները դժվար են ընթանում, հատկապես հակամարտություններին առնչվող դրույթների մասով:

Մյուս կողմից, հնարավորությունը, թե այդ գագաթաժողովի շրջանակներում հնարավոր է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը, եւս լավատեսության տեղիք չի տալիս, քանի որ այդ հավանական հանդիպմանը նախորդած, արդեն իսկ կայացած հանդիպումներից հետո Ադրբեջանի նախագահն ուղղակիորեն փորձել է վարկաբեկել Մինսկի խմբի գործընթացը: Ստացվում է, որ ԵԱՀԿ-ում Ղազախստանի նախագահությունը, խոստումներին ոչ համապատասխան, որեւէ կերպ եւ ոչինչ չի կարող փոխել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԲԱՔՈՒ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ**

# Իրանի նախագահ. Թող բանակցությունները շարունակվեն

Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը հնարավոր է բանակցային պայմաններում՝ արդարության եւ փոխադարձ հարգանքի հիման վրա: Այսպիսի մոտեցմամբ է ղարաբաղյան հարցին անդրադարձել ադրբեջանական «Լիդեր» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Իրանի նախագահ **Մահմուդ Ահմադինեժադը** նոյեմբերի 16-ին, Կասպիցի կարգավիճակի հարցերով հինգ երկրների Բաքվում կայանալիք հանդիպումից առաջ:



Այդ առնչությամբ «Թրենդ» գործակալությունը նշում է, որ Ահմադինեժադը կարեւորել է տարածաշրջանում ժողովուրդների խաղաղ եւ բարեկամական միջավայրում ապրելու հեռանկարը, ընդգծելով, որ բոլորն այստեղ հարեւաններ են, եւ դա արհամարհել որեւէ մեկը չի կարող:

«Հակամարտությունը ռեսուրսների, երկու կողմերի համար էլ նաեւ ժամանակի կորստի պատճառ է, որ նյարդային լարվածություն է ստեղծում՝ խոչընդոտելով զարգացմանը», հայտարարել է Իրանի նախագահը, ավելացնելով, որ Իրանը կրկին իր պատրաստակամությունն է հայտնում «օգնելու հակամարտության կարգավորմանը»:

Սեփական միջնորդության առաջարկը հիմնավորելու համար Ահմադինեժադը հիշեցրել է, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման առաջին քայլերն արվել են նաեւ Իրանի մասնակցությամբ: «Առաջին քայլերն արվել են մեր կողմից: Եթե արդյունք չլինի, մենք կկատարենք ուրիշ քայլեր: Տարածաշրջանային խնդիրը պետք է լուծվի տարածաշրջանի ներսում», ասել է Ահմադինեժադը: Նրա խոսքերով, «օտարների միջամտությունը այդ հարցին հակամարտության աճող խորացման պատճառ կլինի»: Սա, ըստ Իրանի նախագահի, ապացուցված է գործնականում:

Ամեն դեպքում, Իրանի նախագահի խոսքի եզրափակումը առավել քան հասկանալի է, հատկապես ադրբեջանական կողմի համար, որը Մինսկի խմբի գործընթացն ամեն կերպ աղավաղելու, խոչընդոտելու դիրքորոշում է բռնել: «Թող բանակցությունները շարունակվեն: Աստծո օրհնությամբ ելքեր կարող են բացահայտվել», ասել է Ահմադինեժադը:

Երեկ Իրանի նախագահն արդեն Բաքվում էր եւ հանդիպել է Ադրբեջանի նախագահի հետ:

Ա. Հ.

# Խաչքարի խորհուրդն ու խաչքարագործությունը՝ մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում

**«Խաչքարի խորհուրդն ու խաչքարագործությունը» ազգային ներկայացուցչական հայտը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր ասամբլեայի միջկառավարական կոմիտեի քննարկումներում ընդունվել է՝ չնայած ադրբեջանական կողմի դժգոհությանն ու սադրանքներին:**

**Ինչպես տեղեկացնում է մշակույթի նախարարության պաշտոնական կայքէջը, 2010 թ. նոյեմբերի 15-ից Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում ընթանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի անդամ պետությունների միջկառավարական կոմիտեի 5-րդ նստաշրջանը: Օրակարգում ընդգրկվել է «Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության» ցանկերի համալրման հարցը:**

**ՅՈՒՆԵՍԿՕ ներկայացված տարբեր երկրների ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության մաս կազմող արժեքներից փորձագետների ընտրությամբ Քենիայի խորհրդաժողովի օրակարգ է մտել 47 հայտ: Նշված ցանկում տեղ է գտել նաեւ Հայաստանի Հանրապետությունը՝ իր «Symbolism and craftsmanship of Khachkars, Armenian cross-stones» («Խաչքարի խորհուրդը եւ խաչքարագործությունը. հայկական խաչքարեր») ոչ նյութական մշակութային արժեքի հայտով, որը ներկայացնում է խաչքարի ծագումնաբանությունը, զարգացման ժամանակագրությունը, հորինվածքը, պատկերագրությունը, ազգային պատկերացումները, ժողովրդի կյանքում խաչքարի դերակատարությունը, գործառույթները, դրսեւորման ձեւերը, ինչպես նաեւ ժամանակակից խաչքարագործության զարգացումները:**

Տես էջ 2

# «Թուրքը մնում է թուրք»

**ՀՀԿ-ական Գագիկ Մելիքյանի՝ Գյուլի հայտարարության եւ հայ-թուրքական հարաբերությունների ներկա պահի, լուռ դիվանագիտության մասին հարցին ի պատասխան արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը արդեն որերորդ անգամ ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ պնդեց. «Նոր բանակցություններ չեն վարվել եւ չեն վարվում թուրքական կողմի հետ: Եթե թուրքական կողմն անկեղծ է իր ցանկության մեջ՝ կարգավորելու հայ-թուրքական հարաբերությունները, ապա մի պարզ բան պետք է անի՝ վավերացնի եւ իրագործի առանց նախապայմանների եւ այլեւայլի արձանագրությունները», հավելելով, որ եթե առանց նախապայմանների արձանագրությունների վավերացումն անընդունելի է թուրքերի համար, ապա այդ գործընթացը ոչ միայն առաջ չի գնա, այլեւ կձախողվի թուրքերի պատճառով: Այստեղ մեկնաբանության անցավ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը. «Թուրքը մնում է թուրք. ի՞նչ պետք է անենք»:**

Մ. Խ.

# Վիշապների այգին չի պահպանվում ՀՀԿ-ի կողմից

**Երեկ Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանը հարց ուղղեց Նորքի 2-րդ զանգվածում հայտնի հեթանոսական հուշարձաններ ունեցող Վիշապների այգու վերաբերյալ, որը երկու գիշերում ցանկապատվել է, այնտեղ ծառեր են հատվել եւ խոսակցություն կա, թե այնտեղ բազմահարկ շենք է կառուցվելու: Փոստանջյանին հետաքրքրում էր, թե հանրային տարածք համարվող պուրակներն ու այգիներն ինչպե՞ս են օտարվում, երբ դա օրենքով արգելվում է: Ընդ որում՝ այգու դռանը ցուցանակ կա, որ պահպանվում է ՀՀԿ-ի կողմից: Ի պատասխան՝ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը տեղեկացրեց, որ ստացել են ահազանգը, ստեղծել աշխատանքային խումբ, պետք չէ ՀՀԿ -ի հետ կապել, ՀՀԿ-ի բալանսում այդպիսի տարածք չկա: Նրան միացավ նաեւ ԱԺ նախագահը՝ նկատելով, թե պետք չէ կապել ապօրինությունը կուսակցության անվանը:**

Մ. Խ.


# ՀԻՇԵՑՈՒՄ

**ԱՊՊԱ պայմանագրեր ձեռք բերելու ժամկետի ավարտին մնացել է 43 օր:**

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»

**ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:**

- ✔ **ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8**
- ✔ **ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38**
- ✔ **ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20** հասցեներով:
- ▼ **www. ingoarmenia.am կայքում**
- ▼ **010-54-74-05 թեժ գծով:**

Ինչպես նաեւ առաքում:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»

Մենք վճարում ենք: Մի՛շտ*

** համաձայն ապահովագրության պայմանագրի եւ պայմանների:*

*1-ին էջից*

Իր հերթին նախագահ Սարգսյանը ընդգծել է. «Մենք պետք է հիմնավորապես կառուցենք ու վերակառուցենք մեր տունը: Մեր տունը ասելով՝ ես նկատի ունեմ Հայաստանը եւ Արցախը. այսինքն՝ Հայոց հայրենիքը: Նրա բնակիչները պետք է պաշտպանված լինեն ռազմական, իրավական եւ սոցիալական առումներով: Մենք պետք է շարունակաբար ամրանանք՝ դյուրինացնելով տասը միլիոն հայերի համերաշխություն»:

Անդրադառնալով Ղարաբաղի հիմնահարցին՝ Սերժ Սարգսյանը հիմնադրամի գալաերեկոյի ընթացքում ունեցած իր ելույթում շեշտել է. «Իմ ուղերձը շատ հստակ է. Լեռնային Ղարաբաղը կայացած եւ շարունակաբար ամրացող պետություն է, շատ ավելի ժողովրդավարական երկիր է, քան, ասենք, Ադրբեջանը: Բանակցությունները հիմնախնդրի խաղաղ կարգավորման շուրջը շարունակվում են, եւ ինչքան շուտ Ադրբեջանը գիտակցի, որ ԼՂ ինքնորոշման ընդունումն իր համար այլընտրանք չունի, այնքան շուտ կավարտվեն բանակցությունները: Իսկ պաշտպանական մեր կարողությունների մասին երկու կարծիք լինել չի կարող. մենք ուժեղ ենք, ուժեղ ենք, քան երբեւէ, իսկ ամեն հաջորդ օր շատ ավելի ուժեղ ենք լինելու»:



PRESS OFFICE OF THE PRESIDENT OF ARMENIA

# Ամենաբարձր մակարդակով «հայ-ռուսական»

## Ուժեղ միություն

Նոյեմբերի 17-ին արդեն հանրապետության նախագահը մասնակցել է Ռուսաստանի հայերի միության 10-ամյա հոբելյանի առթիվ անցկացված տոնական միջոցառմանն ու Միության 4-րդ համագումարին: Նախագահը բարձր է գնահատել ՌՀՄ շարունակական աշխատանքը եւ կազմակերպության՝ Հայաստանում իրականացրած բազմաբնույթ ծրագրերը:

Սերժ Սարգսյանը Միությանը շնորհավորել է հոբելյանի առթիվ եւ մաղթել «նորանոր հաջողություններ, արգասաբեր աշխատանք՝ ի բարօրություն մեր ժողովրդի եւ հանուն հայության իղձերի իրականացման». «Մենք մշտապես հետեւում եւ առանձնահատուկ կարեւորություն ենք տալիս ձեր նվաճումներին ու խնդիրներին, քանի որ Ռուսաստանի Դաշնությունում է գտնվում աշխարհի ամենախոշոր հայկական համայնքը: Դրանով է նաեւ բացատրվում այն հանգամանքը, որ շարունակաբար ամրացող հայկական կազմակերտությունը՝ Ռուսաստանի հայերի միությունը, ձգտում է միշտ լինել համահայկական նախաձեռնությունների առաջամարտիկների շարքում: Տարիների հետեւողական աշխատանքի արդյունքն է նաեւ, որ այսօր Միությունը դարձել է այն յուրօրինակ ամրասյունը, որն իր շուրջը կարողանում է համախմբել Ռուսաստանի հայությանը», ողջույնի խոսքում ասել է Սերժ Սարգսյանը:

Ռուսաստանի հայերի միության 10-ամյակը շնորհավորել է նաեւ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը: Կրեմլից եկած ուղերձում նշված է. «Ռուս եւ հայ ժողովուրդներին դարերի ընթացքում միավորում են անկեղծ բարեկամությունն ու համակրանքը, որոնք հիմնված են փոխադարձ հարգանքի վրա: Սերտ համագործակցության ու բարիդրացիական հարաբերությունների ավանդույթը փոխանցվել է սերնդից սերունդ եւ նպաստել է մեր մշակույթների զարգացմանը: Իսկ հարյուրավոր հայերի համար, որոնց շարքում կան նաեւ նշանավոր մարդիկ, Ռուսաստանը դարձել է երկրորդ հայրենիք:



PRESS OFFICE OF THE PRESIDENT OF ARMENIA

Այսօր հայկական սփյուռքը ակտիվորեն մասնակցում է ռուս հասարակության տնտեսական ու սոցիալական կյանքի ամրապնդման գործին: Եվ քիչ բան չի անում մեր երկրի ազգամիջյան համաձայնության եւ մշակութային բազմազանության պահպանման համար:

Ցանկանում եմ ձեզ բարօրություն, հաջողություններ եւ ամենայն բարիք»:

ՌՀՄ-ին շնորհավորական ուղերձ է հղել նաեւ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը:

Խոսելով Ռուսաստանի հայ համայնքի մասին առհասարակ՝ նախագահ Սարգսյանը նշել է «Անուրանալի է մեր հայրենակիցների ներդրումը հայ-ռուսական համագործակցության ընդլայնման եւ հատկապես դրա տնտեսական բաղադրիչի զարգացման մեջ: Պատահական չէ, որ Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է եւ հուսալի գործընկերը: Պատահական չէ նաեւ, որ Հայաստանում իրականացվող ներդրումային ծրագրերի ասպարեզում հենց Ռուսաստանն է զբաղեցնում առաջին տեղը: Սա օրինակելի միջպետական հարաբերությունների դրսեւորում է, որի զարգացմանը նաեւ նպաստում է այս երկրում ապրող հայ համայնքը»: Այնուհետեւ՝ հայ-ռուսական բարեկամության խորացման, ազգային շահերի պաշտպանության գործում ներդրած նշանակալի անձնական ավանդի համար Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել է Պատվո շքանշանով: Նախագահ Սարգսյանն անձամբ է հանձնել պատվոգիրն ու շքանշանը Աբրահամյանին:

## «Ռազմավարական ընկերներ»

Նոյեմբերի 17-ին ՀՀ նախագահին հյուրընկալել են ինչպես Կրեմլում, այնպես էլ ՌԴ կառավարությունում: Նախագահներ Սարգսյան-Մեդվեդեւ հանդիպման ընթացքում, որը, մեկ ամսվա ընթացքում արդեն երկրորդն է, քննարկվել են «երկկողմ հետաքրքրություն ունեցող հարցեր»: Նմանօրինակ օրակարգով հանդիպում ՀՀ նախագահն ունեցել է նաեւ ռուսական «Սպիտակ տանը»՝ վարչապետ Պուտինի հետ:

Մեդվեդեւ-Սարգսյան հանդիպումը, սակայն, հատկանշական է մեկ այլ առումով. այսօր արդեն ՌԴ նախագահը կլինի Բաքվում՝ մասնակցելու կասպյան երկրների ղեկավարների խորհրդակցությանը: Իսկ,վերհիշելով Մեդվեդեւի՝ հոկտեմբերի 27-ին Աստրախանում արած հայտարարությունը, թե «այս մեկ ամսվա ընթացքում կողմերը պետք է լավ աշխատեն», նշենք, որ Մեդվեդեւ-Սարգսյան եւ Ալիեւ-Մեդվեդեւ ընդամենը մեկ օր տարբերությամբ հանդիպումների ընթացքում ՌԴ նախագահը պետք է, որ գոնե հետաքրքրվի կողմերի կատարած աշխատանքով:

Ինչպես փոխանցում է «ՌԻԱ Նովոստին»՝ «Նախագահ Մեդվեդեւը ադրբեջանցի իր գործընկերոջ հետ Բաքվում այլ՝ հիմնականում էներգետիկ հարցերի շարքում, կքննարկի նաեւ ղարաբաղյան հիմնահարցը»: Ի դեպ, Մեդվեդեւը Բաքվում կհանդիպի նաեւ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին, որին՝ չարչրկված C-300 չվաճառելուց հետո բավական «նեղացրել» էր:

Սպասենք, ուրեմն, նաեւ կասպյան խորհրդաժողովի ավարտին, որպեսզի սպասելիքները Աստանայից, եթե, իհարկե, դրանք առաջանան, ավելի հստակ լինեն:

# Խաչքարի խորհուրդն ու խաչքարագործությունը՝ մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում

*1-ին էջից*

**Քննարկման ընթացքում Ադրբեջանի ներկայացուցիչը, ի թիվս այլ փոփոխությունների, պահանջել է հայկական հայտի անվանումը խմբագրել «Հայկական խաչքարի խորհուրդն ու խաչքարագործությունը» տարբերակով: Սրանով փորձել է հաստատել, որ խաչքարագործությունը միայն հայերինը չէ եւ բնորոշ է կովկասյան ալբանացիներին, որոնց հետնորդները իբր թե ադրբեջանցիներն են: Արդեն սովորական դարձած հայտարարությունները, թե Հայաստանը ինչ է արել Ադրբեջանին, բնականաբար, բաց չեն թողնվել: Ի պատասխան՝ Հայաստանի ներկայացուցիչը՝ ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Ա. Սամուելյանը հայտարարել է, որ մեր պետության դիրքորոշումը հստակ է, եւ պետք չէ այս բարձր ամբիոնը քաղաքականացնել եւ արծարծել թեմաներ, որոնք որեւէ կապ չունեն ժողովուրդների ազգային ինքնությունն արտահայտող արժեքների քննարկմանը:**

**Ադրբեջանն իր այս քայլով փորձել է վիճարկել խաչքարի ծագումնաբանությունը: Հետագա լարված քննարկումներից խուսափելու նպատակով կոմիտեն առաջարկել է այս խնդրահարույց հարցին անդրադառնալ ընդմիջումից հետո: Նոյեմբերի 16-ին վերսկսվել են քննարկումները, եւ այս անգամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնից հանդես է եկել Ադրբեջանի ազգային փոքրամասնություններից ուդիների ներկայացուցիչը՝ նշելով, որ խաչածածկ քարերի մշակույթը բնորոշ է նաեւ իր ժողովրդին: Այդ կապակցությամբ Հայաստանի ներկայացուցիչը հանդես է եկել ելույթով, նշելով, որ ուդիները 5-րդ դարից ի վեր Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդ դաղստանյան ժողովուրդներից են, որոնք մինչեւ 1988 թ. ապրել են Ադրբեջանի տարածքում գտնվող Վարդաշեն եւ Նիժ գյուղերում, մասնավորապես Նիժ գյուղում, որը գտնվում է Կուտկաշենի շրջանում:**

**Ադրբեջանցիների կողմից հայկական բնակավայրերի անվանափոխության քաղաքականությամբ 1989 թ. Կուտկաշենը վերանվանվել է Գաբալլա, իսկ Վարդաշենը՝ Օղուզ: 1988-89 թթ. հայ ինքնության մաս կազմելու պատճառով՝ ադրբեջանական կառավարությունը բռնագաղթի է ենթարկել 8-10 հազ. ուդիների, որոնց մի մասն այսօր ապրում է ՀՀ Տավուշի մարզում, իսկ մյուս մասը՝ Վրաստանում: Նիժ եւ Վարդաշեն գյուղերի շրջակայքում կան 14-15-րդ դդ. խաչքարեր, որոնք Կուրի ձախափնյա Ադրբեջանում խաչքարերի եզակի կղզյակ են կազմում: Բոլոր այդ խաչքարերն ունեն հայերեն արձանագրություններ, եւ Ադրբեջանը, գիտակցելով դրանց հայկականությունը, միսումնավոր լռության է մատնել խաչքարերի գոյության փաստը:**

**Այս ելույթից հետո միջկառավարական կոմիտեն, ընդունելով ներկայացված բոլոր արժեքների հայտերը, առաջարկել է հայկական հայտի քննարկումը տեղափոխել նոյեմբերի 17-ի օրակարգ: Միեւնույն ժամանակ ՅՈՒՆԵՍԿՕ-ն առաջարկել է կազմակերպել իր ներկայացուցչի ներկայությամբ՝ հայկական եւ ադրբեջանական կողմերի միջեւ բանակցություն՝ խնդրին երկուստեք ընդունելի լուծում տալու նպատակով: Երկարատեւ ու լարված քննարկումների արդյունքում միջկառավարական կոմիտեն հաշվի չի առել ադրբեջանական կողմի պնդումները եւ ընդունել է հայկական կողմի առաջարկած «Armenian cross-stones art. Symbolism and craftsmanship of Khachkars» («Հայկական խաչքարի արվեստը. խաչքարի խորհուրդն ու խաչքարագործությունը») տարբերակը:**

**Հայկական հայտն ընդունվել է: Ընդունվել է, սակայն Ջուղայի խաչքարերն այլեւս անցյալ են...**

Ա. Հ.

ՌԵՊԼԻԿ

# ՀԴՄ կտրոնների շահումները եւ բոնուսները դարձյալ չեն տրամադրվում

**Պարբերաբար զավեշտալի իրավիճակներ են ստեղծվում ՀԴՄ շահող կտրոնների շահումների եւ չշահող կտրոնների բոնուսների տրամադրման շուրջը: Պաշտոնական աղբյուրները հայտարարում են, թե երբ եւ ինչպես կարելի է ստանալ դրանք, իսկ երբ քաղաքացիները, հետեւելով պաշտոնական տեղեկատվությանը, դիմում են «Հայփոստի» բաժանմունքներ, պատասխան են ստանում, որ ՀԴՄ-ների գումարներ չեն տրամադրվում: «Ինչո՞ւ» հարցին հետեւում է «գումար չունենք» պատասխանը:**

**Մեղմ ասած, անհասկանալի է կառավարության մոտեցումը ՀԴՄ կտրոնների առնչությամբ: Մի կողմից՝ վկայակոչվում է դրանց կարեւորությունը իրական փաստաթղթաշրջանառության բացահայտման, ստվերային շրջանառության նվազեցման համար, մյուս կողմից՝ կատարվում են կիսատ-պռատ քայլեր, անընդհատ ի վնաս սպառողի փոփոխվում է բոնուսների կարգը, բացակայում են տրամադրվող գումարները, ինչն ուղղակի հիասթափություն է առաջացնում: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ կառավարությունը ցանկանում է ջուրը մտնել, բայց չթրջվել: Ինչպես հայտնի է, այդպես չի լինում: Եթե ցանկանում ես ստվերային շրջանառություն բացահայտել, ապա պետք է՛ւ հարկային վարչարարություն կիրառել, է՛ւ սպառողների համար իրական խթաններ ստեղծել, է՛ւ այդ խթաններն անխափան իրականացնել: Մանրունքներ այստեղ չկան: Եթե որեւէ օղակ չաշխատեց, ամբողջ գործընթացն է վարկաբեկվում եւ տապալվում: Սակայն նկատի ունենալով մեր պետական մեքենայի, մեղմ ասած, անկարգապահ աշխատանքը, ապա պարզ է դառնում, որ որեւէ օղակում անպայման խափանում կլինի եւ լինում է, որի հետեւանքներն էլ երկար սպասել չեն տալիս:**

**Եթե պլանավորվածից ավելի մի քանի տասնյակ միլիարդ դրամի եկամուտներն են հավաքվել, ինչի մասին պարբերաբար հայտարարում է պետեկամուտների կոմիտեն, ապա ի՞նչն է խանգարում դրանց մի չնչին մասն արագ ու օպերատիվ ուղղել այն բոնուսների եւ շահումների տրամադրմանը, նաեւ որի շնորհիվ այդ լրացուցիչ գումարներն են ստացվում: Այսինքն, գումարներ հավաքելը լավ է, բայց դրանցից բաժին հանելը նրանց, ում շնորհիվ հավաքվել են այդ գումարները, այնքան էլ կարեւոր չէ՞: Երեւի բոլորը գիտեն, թե ինչպես են նման երեւույթներն անվանվում: Հիմա պետությունը հրաժարվելո՞ւ է այդ գործելակերպից, թե՞ ոչ, շարունակելով գցել իր վարկանիշը շարքային քաղաքացիների առաջ:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

# Ինչպե՞ս ենք վաստակելու եւ ծախսելու բյուջեի 1 տրիլիոնը

Երեկ Ազգային ժողովում ներկայացվում էր 2011 թվականի բյուջեի նախագիծը: Էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանի** ներկայացրած թվերով՝ 2011 թվականին Հայաստանի բյուջեն մոտենում է 1 տրիլիոն դրամի սահմանագծին, եւ մեծ հավանականություն կա, որ այդ սահմանագիծը կհատվի տարվա ընթացքում: Նախագծի ծախսային մասը կազմելու է 998, 6 միլիարդ դրամ, որի ամենախոշոր մասնաբաժինը սոցիալական ապահովության



ծախսերն են լինելու, որոնք կազմելու են բյուջեի ծախսային մասի շուրջ 27 տոկոսը՝ 272 մլրդ դրամի չափով: Ընդհանրապես՝ բյուջեի ծախսային բաժինն ավելացել է ներկա բյուջեի համեմատ 63 մլրդ դրամի չափով, որի առյուծի բաժինը՝ 43 մլրդ դրամի չափով, ուղղվելու է սոցիալ մշակութային ծասերի մեծացմանը:

Առողջապահությանն ու կրթությանն ուղղվող ծախսերի ծավալը եւս մեծացել է՝ 108 մլրդ դրամ. կրթության ծախսերն 9 մլրդով ավելի են լինելու, առողջապահության ծախսը 62 մլրդ դրամ է նախատեսված: Մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձները կբարձրացվեն մոտ 15 տոկոսի շրջանակում, առողջապահության ոլորտում եւս աշխատավարձերը կավելանան: Լուրջ հատկացումներ են պաշտպանության ոլորտում՝ 140,6 մլրդ դրամի չափով, երկրի պաշտպանունակությունը պատշաճ ապահովելու համար: Բյուջեի եկամտային հատվածը 850 մլրդ դրամ է լինելու՝ կազմված հարկային եկամուտներից, սոցիալական պարտադիր վճարների գանձումից, վարկային միջոցներից, դրամաշնորհների մուտքերից: Հարկային եկամուտներն հաջորդ տարի ընդհանուր առմամբ 650 մրդ դրամի չափով են նախատեսված (այս տարի 570 մլրդ էր), տնտեսական աճի եւ վարչարարության բարելավման հաշվին ավելացումը պետք է լինի: Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը եկող տարի նույնպես ավելանալու է՝ 0,3-0,4 կետով: Նոր բյուջեի հիմնական ուղղվածությունը ներկայացնելով՝ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** շեշտեց, որ շարունակվելու է մակրոտնտեսական կայունությանը եւ տնտեսական աճի կայուն տեմպերի պահպանմանը նպաստող վերջին տարիներին վարվող հարկաբյուջետային քաղաքականությունը՝ բյուջետային դեֆիցիտի աստիճանական նվազեցում, պետական պարտքի աճի տեմպերի սահմանափակում, ողջամիտ՝ այսինքն տնտեսության զարգացման համար անվտանգ մակարդակ, լողացող փոխարժեքի ռեժիմ: Մասնավորապես, գնաճը 12-ամսյա թիրախով կանխատեսվում է 4.0 տոկոսի շրջանակներում՝ 1.5 տոկոսանոց միջանցքում, իսկ ծախսերի առումով նախատեսվում է իրականացնել բյուջետային դեֆիցիտի ծրագիր, որ դեֆիցիտը չգերազանցի 4 տոկոսը: Դեֆիցիտը հիմնականում կֆինանսավորվի փոխառու միջոցներով, ներքին եւ արտաքին ռեսուրսների հաշվին, ընդ որում՝ 86.8 տոկոսը բաժին կընկնի արտաքին պարտքին եւ 2011 թվականի վերջում կանխատեսում են ունենալ 4305.1 մլն ԱՄՆ դոլարի չափով արտաքին պարտք: Ըստ վարչապետի՝ արտաքին պետական պարտքի այսպիսի բեռը բնութագրվում է որպես նվազ կամ միջին հարկային բեռ, այն սպասարկման վտանգներ չի պարունակում:

Ս. Խ.

# Ոսկորն ո՞ւմ կոկորդում է



Խորհրդարանում երեկ շարունակություն ունեցավ Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանի եւ ՀՀԿ պատգամավոր Սպարտակ Մելիքյանի՝ մեկ օր առաջ սկիզբ առած դիմակայությունը: Որոշ շրջանակներ վստահեցնում են, թե Հայաստանի երկրորդ եւ երրորդ նախագահների հակադրության համատեքստում լիովին տեղավորվում է պատահածը՝ նկատի առնելով Հայաստանի հանքային արդյունաբերությունում երկրորդ նախագահի ունեցած ստվերային դերակատարության պարագան: Համենայն դեպս, մեկ օր առաջ Սպարտակ Մելիքյանը, ՎՊ ստուգումների արդյունքների հետ կապված անհամաձայնություն հայտնելով «Անանիա Շիրակացի» համալսարանի մասով, որի սեփականատերն է նա, ԱԺ ամբիոնից հայտարարեց, թե ՎՊ-ի աշխատակիցը 4 հազար դոլար կաշառք է պահանջել իրենից՝ համալսարանը սեւ ցուցակում չընդգրկելու համար: Կաշառք չտալու համար էլ համալսարանը հայտնվել է ՎՊ քննադատության թիրախում: Երեկ առավոտյան, ՎՊ 2011-ի ծրագիրը ներկայացնելիս, Ի. Զաքարյանը պատասխան հայտարարություն արեց՝ հայտնելով, թե Վերահսկիչ պալատը դասի է տվել Ս. Մելիքյանին զրպարտության համար, նշելով, թե «Շիրակացի» համալսարանում արձանագրված խախտումները «միանշանակ ճիշտ, անառարկելի եւ հիմնավոր են», բացի այդ՝ համալսարանի բաժնետոմսերի 100 տոկոսը պատկանում է Մելիքյանին, ինչը պատգամավորական գործունեության հետ անհամատեղելի է եւ արգելվում է սահմանադրությամբ. «ՎՊ ստուգումների արդյունքում ոսկորը շատերի կոկորդում է մնում», ասաց նա՝ օրենքի դաշտում՝ դատարանում խոսել հրավիրելով իր ընդդիմախոսին: Սպարտակ Մելիքյանը, պատասխանելով լրագրողների հարցերին, հավաստեց, որ կարող է ապացույցներ ներկայացնել կաշառք պահանջելու իր հայտարարության վերաբերյալ: Նրա կարծիքով՝ սահմանադրությունը թույլ է տալիս համալսարանի սեփականատեր լինել (օրենսդրական գործունեությունը գործարարության հետ համադրելն արգելող հայտնի դրույթը բա-Մ.Խ.), իսկ Ի. Զաքարյանը լավ չգիտի սահմանադրություն. Նա ասում էր, որ այս ամենը չի կապում «Անանիա Շիրակացու» հետ, չնայած ՎՊ-ի բերած փաստերն այդ համալսարանի մասին բացարձակ սուտ են, բայց իրականում Մելիքյանի հայտարարությունն այդ համալսարանի հետ չի կապվում. «Այնքանով է առնչվում՝ քանի որ կա կոնկրետ փաստ եւ կոնկրետ մարդ, ինձանից, որպես խորհրդի նախագահի, պահանջել է այդ գումարը՝ 4 հազար դոլար կաշառք, եւ ես կաշկանդված չեմ, ու կարող եմ հայտարարել. այդ է պատճառը, որ ես բերեցի այդ օրինակը: Իմ հայտարարության մեջ ես ավելի մեծ ու կարեւոր միտք ասացի, որ այդ գործելաոճն աշխատում է մի քանի տարվա ընթացքում: Այսինքն՝ սա առաջին դեպքը չէ, որ տարբեր հիմնարկներ ստուգելուց կա այդպիսի երեւույթ, եւ այդ երեւույթից կախված շատ-շատ պաշտոնյաներ վախենում են բարձրաձայնել, այդ երեւույթի մասին խոսել»:

«Միայն կոռուպցիա՞ն նկատի ունեք, թե՞ քաղաքական ենթատեքստեր էլ եք դնում Ձեր խոսքի մեջ», հետաքրքրվեց «**Ազգը**». «Կոռուպցիան առաջին հերթին, իհարկե՝ նաեւ նկատի ունեմ քաղաքական կոնտեքստում, եւ իհարկե՝ ՎՊ-ում: Որովհետեւ բոլոր պետական կառույցներն էլ հասկանում են, որ ամեն խնդրի շուրջը, բյուջեի հետ կախված բոլոր ելքումուտքերը վերջում գալիս-ստուգում է ՎՊ-ն, եւ եթե կա այն մթնոլորտը բոլորի մոտ, որ կարելի է անել ամեն ինչ, հետագայում լեզու գտնել ՎՊ-ի հետ եւ այդ ամենը ծածկելգնալ՝ այդ կոռուպցիան միշտ էլ զարգանալու եւ լինելու է. մեղադրել, որ մեր համայնքապետերը բոլորը գողեր-ավազակներ են, կամ մեր նախարարները բոլորը թալանչի են, դա մեծ տգիտություն է, որովհետեւ ամեն ինչ գալիս է սիստեմից. եթե իրենց վերահսկող մարմինը թույլ է տալիս այդ ամեն ինչը անել, հետո իրենց հարցերը կարգավորել, պարզ բան է, որ բոլորն էլ թալանելու են. ում էլ տանենք-դնենք գյուղապետ, քաղաքապետ, եթե այդ հնարավորությունն ունեն՝ օգտվելու են դրանից», սիստեմը բացատրեց Մելիքյանը: «Նախարարներն ինչո՞ւ չեն բողոքում, Դուք եք բողոքում», հարցրինք. «Ամեն նախարար թող ինքը որոշի՝ ինչո՞ւ այդ հարցը չի բարձրացնում», ասաց Ս. Մելիքյանը: Քանի որ նա իր հայտարարությունը համարում է հաղորդում իրավապահ մարմիններին, տեղեկացրեց, որ խնդրելու է խորհրդարանին՝ զրկել իրեն անձեռնմխելիությունից, որ հետագայում որեւէ մեկը չասի՝ խոչընդոտում է քննությանը կամ պատգամավոր է, խուսափում է բացատրություն տալուց:

Մեր կողմից ավելացնենք, որ պատգամավորը կարող է վայր դնել մանդատը, բայց չի կարող անձեռնմխելիությունից զրկվել եւ պատգամավոր մնալ:

Իսկ ընդհանրապես՝ այս դիմակայությանը հետեւող մարդը չի կարող մտածել, որ սա անձերի խնդիր է. տակից խորքային գործընթացները երեւում են: Համենայն դեպս՝ սա չի կարող աղմկոտ շարունակություն չունենալ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Բուհերի ուսխորհուրդների նախագահները խոսում են ուսանողության ու կրթության մասին

Նոյեմբերի 17-ն ուսանողության միջազգային օրն է: Երեկ «Արմաս» ակումբում կազմակերպված ասուլիսի թեման վերաբերում էր ուսանողությանն ու նրան հուզող խնդիրներին: Բանախոսները 4 բուհերի ուսխորհուրդների նախագահներն էին: Օգտվելով առիթից՝ նրանք շնորհավորեցին ուսանողներին տոնական օրվա կապակցությամբ: ԵՊՀ-ի ուսխորհրդի նախագահ **Ցոլակ Հակոբյանը** նշեց, որ նոյեմբերի 17-ը ոչ միայն ուսանողության, այլեւ երիտասարդության տոնական օր է համարում. «Այս տոնի հանդեպ մարդկանց հետաքրքրությունը մեծացնելն ուսխորհրդի նպատակներից մեկն է»: Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ուսխորհրդի նախագահ **Էմին Թորոսյանն** էլ ասաց, որ ուսանողների միջազգային օրվան նվիրված տարբեր միջոցառումներ են կազմակերպվել, եւ դրանք դեռ շարունակվում են: Խոսելով օրվա խորհրդի մասին՝ Երեւանի պետական մանկավարժական համալսարանի ուսխորհրդի նախագահ **Վոլոդյա Գասպարյանը** նշեց. «Կարծում եմ՝ ուսանողները գիտակցում են ուսանող լինելու կարեւորությունը, եւ իրենց գիտելիքները կօգտագործեն մեր երկրի զարգացման համար»: Անդրադառնալով հայ ուսանողի խնդիրներին՝ Էմին Թորոսյանն առանձնացրեց սոցիալական խնդիրը: Երիտասարդներն ընդունվում են բուհ, սակայն չկարողանալով վճարել ուսման վարձը՝ կրթությունը կիսատ են թողնում: Երեկ ճարտարագիտական համալսարանում ուսանողներն ու ուսանողական կառույցների ղեկավարները հանդիպել էին հանրապետության վարչապետին եւ կրթության ու գիտության նախարարին: «Բարձրաձայնել ենք խնդիրներ՝ սոցիալական սկսած մինչեւ կադրերի արտագաղթի մասին: Սոցիալական վիճակի վերաբերյալ վարչապետը պատասխանեց, որ առաջիկայում կգտնվեն միջոցներ, որպեսզի պետությունն այդ հոգսը որոշակի առումով իր վրա վերցնի», տեղեկացրեց Է. Թորոսյանը:

Ուսանողության ու կրթության խնդիրները բազմաթիվ են: ԵՊՀ-ի ուսխորհրդի նախագահն էլ խոսեց կոռուպցիայի մասին: Նրա խոսքով՝ մինչեւ տարեվերջ ԵՊՀ-ում պատրաստվում են հետազոտություն անցկացնել կոռուպցիայի օբյեկտիվ պատկերը ներկայացնելու նպատակով: Լրագրողներից մեկի հարցին, իսկ կոռուպցիայի գոյության համար ո՞վ է մեղավոր, Ցոլակ Հակոբյանը պատասխանեց, որ մեղավոր են ե՛ւ ուսանողը, ե՛ւ դասախոսը: Էմին Թորոսյանը հպարտորեն ավելացրեց, որ Թատրոնի ու կինոյի պետական ինստիտուտում որեւէ դասախոս ուսանողից գումար չի վերցնում քննության գնահատական նշանակելու համար. «Մեզ մոտ նման բան չկա, «բաց ճակատով» եմ ասում»: Ուսխորհրդի նախագահի խոսքերն այնքան վստահ էին հնչում, որ բոլորս սկսեցինք հավատալ, որ կոռուպցիան իսկապես շրջանցել է թատրոնի եւ կինոյի ինստիտուտը: Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսխորհրդի նախագահ **Հասմիկ Ափյանը** տեղին նշեց. «Կոռուպցիա կա բոլոր բուհերում», սակայն չուզենալով գցել իր բուհի հեղինակությունը՝ նա ավելացրեց. «Մեր բուհում գիտելիք ունեցողն իր արժանի գնահատականը ստանում է»: Ուսխորհուրդների նախագահները շտապելով նշեցին, որ սովորողն իրեն արժանի գնահատական ստանում է, բայց կան դասախոսներ, որոնք երկու ոտքը մտցնում են մի կոշկի մեջ եւ ուսանողին գնահատում անբավարար միայն այն պատճառով, որ ուսանողը կաշառք չի տվել, այս ու նմանատիպ խնդիրներից բանախոսները գերադասեցին չխոսել:

«**Ազգի**» հարցին՝ ինչպիսի՞ն է բարձրագույն կրթության որակը, եւ բանախոսներն ինչպե՞ս են վերաբերվում սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Արսեն Քարամյանի՝ վերջերս արած հայտարարությանը, թե Հայաստանում կրթությունը պետք է լինի թանկ եւ որակյալ, բայց միաժամանակ մատչելի այն խավի համար, որը տաղանդ ունի, սակայն սոցիալապես խոցելի է, պատասխանեցին 4 բանախոսներն էլ: Ցոլակ Հակոբյանի խոսքով՝ ԵՊՀ-ում 18 հազար ուսանող է սովորում, բայց համալսարանն ի վիճակի է ապահովելու միայն 8-9 հազար ուսանողի կրթությունը: Նույնիսկ համալսարանի շենքային պայմանները բավարար չեն դասերն անցկացնելու համար: Օրինակ՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում դասերը հաճախ ընդհատվում են լսարան չլինելու պատճառով:« Այսինքն՝ 10 հազար ուսանողներ խոչընդոտում են կրթություն ստանալու նորմալ գործընթացին: Զուտ այս մասով համաձայն ենք պարոն Քարամյանի հայտարարությանը: Ամեն անգամ բարձրաձայնում ենք, որ ընդունելության քննությունները խիստ անցկացվեն», ասաց Ց. Հակոբյանը եւ ավելացրեց . «Ես կողմ եմ, որ «Էլիտար» ֆակուլտետներում՝ միջազգային հարաբերությունների կամ իրավագիտության բաժիններում, վարձավճարներն ավելանան, բայց դրանց հաշվին, օրինակ՝ բնագիտական ֆակուլտետում վարձավճարը պետք է իջեցվի, որտեղ դիմորդների թիվը տարեցտարի նվազում է»:

Ի տարբերություն Ց. Հակոբյանի Լեզվաբանական համալսարանի ուսխորհրդի նախագահը փոխնախարարի հայտարարությանը կողմնակից չէ. «Չեմ կարծում, որ ուսման վարձի բարձրացումը կարող է նպաստել ուսման որակի բարձրացմանը: Վարձավճարների ներկայիս գներն արդեն բավարար են, դեռ մի բան էլ ավելի են, իսկ բուհ պետք է ընդունվեն միայն այն դիմորդները, որոնք գիտելիքներ ունեն»: Հասմիկ Ափյանի խոսքը լրացրեց Էմին Թորոսյանը՝ ասելով, որ կրթության որակը պետք է բարձրացվի. «Բայց դա չի նշանակում, որ երբ բարձրացվեն վարձավճարները, որակյալ կրթություն կլինի»: Վոլոդյա Գասպարյանն էլ ասաց. «Եթե ամեն մեկս մեր գործով զբաղվենք, ամեն ինչ իր տեղում կլինի, կրթության ու գիտության որակն էլ կբարձրանա»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Ի՞նչ «տանել» Աստանա

ԵԱՀԿ հերթական գագաթաժողովը, արդեն կարելի է վստահաբար ասել, տեղի կունենա դեկտեմբերի 1-2-ին Աստանայում: Թե ինչո՞ւ 11 տարվա ընդմիջումից հետո նման որոշում է ընդունվել, այս մասին հնարավոր կլինի դատողություններ անել արդեն գագաթաժողովից հետո, երբ հայտնի կդառնան դրա գոնե նախնական արդյունքները: Մինչ այդ որեւէ ենթադրություն կնմանվի սուրճի բաժակի գուշակության:

Մի հարցում, իսկն ասած, «գուշակությունները» արդեն սկսված են: Ոմանք ենթադրում են, որ Աստանան «շրջադարձային կլինի» ղարաբաղյան բանակցություններում: Մյուսները, ընդհակառակը, գտնում են, որ «արտառոց ոչինչ չպետք է սպասել»: Երրորդները բռնում են «միջին» դիրք եւ զգուշավոր լավատեսությամբ կանխատեսում, թե «ճեղքում, իհարկե, դժվար թե արձանագրվի, բայց ինչ որ առաջընթաց կլինի»:

Օրերս շատ հետաքրքրական տեսակետ էր հայտնել քաղաքագետ **Ռասիմ Մուսաբեկովը**: Ըստ այդմ, «ռուսական կողմը որոշակի աշխատանք է տարել Ադրբեջանի արտգործնախարարի հետ, որպեսզի Աստանայում ինչ-որ առաջընթաց լինի»: Մուսաբեկովը նաեւ ավելացրել է, որ «ավելի շուտ կկատարվեն մի քանի ոչ նշանակալի շտկումներ, որպեսզի (փաստաթուղթը) ընդունելի դառնա նաեւ հայկական կողմի համար»:

Եթե համադրենք քաղաքագետի ասածը, ապա կստացվի, որ «ռուսական կողմի աշխատանքից հետո» Ադրբեջանը համաձայնել է, որ (փաստաթղթում) կատարվեն «մի քանի ոչ նշանակալի շտկումներ», որից (փաստաթուղթը), հնարավոր է, «ընդունելի դառնա հայկական կողմի համար»: Հակառակ դեպքում Մուսաբեկովը չի բացառում, որ «կարող է կրկնվել այն, ինչ եղավ Լիսաբոնում»:

Իսկ Լիսաբոնում, ինչպես հայտնի է, հայկական կողմն է օգտագործել «վետո»-ի իրավունքը: Թեեւ նախագահ Հեյդար Ալիեւն էր սպառնում առհասարակ «վետո» կիրառել գագաթաժողովի բոլոր որոշումների դեմ:

Այսպիսով, բավական ազդեցիկ քաղաքագետը, որ նոյեմբերի 7-ին հայտարարվել է «ընտրված պատգամավոր» եւ ցանկություն ունի «խորհրդարանում մեծ մասամբ զբաղվելու արտաքին հարցերով եւ հատկապես ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացով», թեեւ կեսբերան, այնուամենայնիվ հասկացնում է, որ Աստանայում ադրբեջանական պատվիրակությանը հեշտ քննարկումներ չեն սպասում:

Փաստորեն, եթե, իհարկե, Մուսաբեկովի դատողությունները որեւէ լուրջ աղբյուրից են արտոնված, իսկ նրա ներկա կարգավիճակն այլ ենթադրության տեղ չի թողնում, կարելի է շատ զգուշավոր կարծիք հայտնել, որ Ադրբեջանը «մադրիդյան նորացված առաջարկությունների» մասին պնդումներն աստիճանաբար սկսում է «մոռացության տալ»:

Այն, ինչ ադրբեջանցի քաղաքագետն անվանում է «ոչ նշանակալի շտկումներ», հնարավոր է՝ հենց հայկական կողմի համար անընդունելի ձեւակերպումներն են, որոնց «վերաձեւակերպման հարցում» Ադրբեջանը նախնական համաձայնություն «տվել է»:

Խոսքը Սանկտ Պետերբուրգում քննարկված գաղափարների՞, թե՞ մադրիդյան առաջարկությունների նախնական տարբերակի մասին է՝ ստույգ անհնար է իմանալ: Չի բացառված, որ, ինչպես ՀՀԿ փոխնախագահ **Ռազմիկ Զոհրաբյանն** օրերս ասաց, «Աստանայում ամեն ինչ սկսվի զրոյից»: Այսինքն՝ բանակցային գործընթացի տրամաբանությունը «ճեղքման սպասումներից» վերադառնա «սկզբունքների համաձայնեցման հորդորի» փուլին:

Հայկական կողմի դիվանագիտական ռեսուրսն այս առումով անհամեմատ լուրջ է: Արդեն իսկ տեղեկատվական որոշ «արտահոսքերից» կարելի է եզրակացնել, որ Աստանայի գագաթաժողովում ենթադրվում է վերահաստատել կազմակերպության հավատարմությունը Հելսինկյան եզրափակիչ փաստաթղթին, ինչի հիման վրա էլ միջնորդները փորձում են համաձայնեցնել ղարաբաղյան կարգավորման հայեցակարգը:

Առայժմ այդ ջանքերն անարդյունք են, քանի որ Ադրբեջանը միջազգային իրավունքը մեկնաբանում է միակողմանի, կարգավորման սկզբունքներից առանձնացնում միայն մեկը, մյուսները պայմանավորում դրանով: Հայաստանը մինչդեռ պնդում է, որ հայեցակարգը քննարկման ենթակա է իր ամբողջության մեջ:

Ադրբեջանը ԵԱՀԿ գագաթաժողովի է գնում նաեւ ներքաղաքական կյանքում կորուստներով: Խորհրդարանական ընտրություններից հետո ստեղծված իրավիճակն ընդդիմադիր լրատվամիջոցներից մեկը բնութագրել է այսպես՝ «չեղած հույսերի մահվան ժամանակ»: Ավելի դիպուկ թերեւս չի ասվի՝ հույսեր չկային, բայց հույսի հույսն էլ մեռցվել է:

Եվ սա բոլորն են տեսնում: Ճիշտ է, Աստանայից առաջ Բաքվում կգումարվի Կասպյան ավազանի երկրների առաջնորդների գագաթաժողով, եւ Իլհամ Ալիեւը եւս մի առիթ կունենա ասելու, որ «Ադրբեջանը համաշխարհային էներգետիկ ծրագրերում առանցքային դերակատարություն ունի», բայց ՌԴ նախագահի ներկայությամբ իրեն ավելին թույլ չի տա: Քանի որ միջազգային բոլոր դիտորդներից միայն ԱՊՀ առաքելությունն է «Ադրբեջանում ժողովրդավարության ճանապարհին դրական տեղաշարժ տեսել», այն էլ՝ մի այնպիսի վերապահումով, որ ի չիք է դարձնում նախորդ «գովասանքը»:

Եվ այդ վերապահումը հնչեցրել է ՌԴ արտգործնախարարության ներկայացուցիչ Ալեքսեյ Սազոնովը՝ ասելով, որ «ընտրությունները համապատասխանել են ընտրությունների մասին ադրբեջանական օրենսդրությանը եւ դեմոկրատական չափանիշներին»: Ոչ թե՝ միջազգային, այլ՝ «ադրբեջանական դեմոկրատական չափանիշներին», որ նույնն է, թե չեն համապատասխանել համընդունելի չափանիշներին:

Եթե որեւէ մեկը կարծում է, թե դա կապ չունի Կասպյան ավազանի երկրների առաջնորդների գագաթաժողովի հետ, ապա սխալվում է: Շատ հավանական է, սակայն, որ խորհրդարանական ընտրությունների գնահատման ԱՊՀ-ական, իրականում՝ ռուսաստանյան, «արշինը» եւ ամերիկյան «ֆունտը» Աստանայի քննարկումների ընդհանուր համապատկերի վրա այնքան զանազանվեն, որ միջնորդները չկարողանան թաքցնել «կոնսոլիդացված մոտեցումների» փլուզման սպառնալիքը:

Այդ դեպքում, իրոք, հարկ կլինի ամեն ինչ սկսել նորից: Բայց, ամեն դեպքում, Իլհամ Ալիեւն Աստանա է մեկնելու դիվանագիտական շատ սուղ «ուղեբեռով»: Նա ինքը չափազանց սեղմել է ընտրության հնարավորության շրջանակը: Եւ այժմ ստիպված է գտնել այն «ընդարձակելու» տարբերակ: Իսկ դա նշանակում է «դիվանագիտական ժամանակի մեջ» բանակցությունների երկարաձգում:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# «Ապրելու բանաձեւը» կամ պատգամ սերունդներին

**«Ապրելու բանաձեւը» մատենաշարն անդրադառնում է Արցախյան գոյամարտում հերոսի մահով ընկած հայ քաջորդիների կյանքին եւ նրանց պատմություններով ներկայացնում ազգային-ազատագրական շարժումը: Նրանցից շատերը կամավոր մեկնեցին Արցախ՝ հայրենիքն ազատելու համար: «Ապրելու բանաձեւը» հայրենասիրության լավագույն դասագրքերից մեկը կարելի է համարել, որտեղ թեորիաներին փոխարինում է իրական կյանքը՝ մարդիկ ու պատմություններ, հիասթափություններ, չիրականացած հույսեր, գաղտնի երազանքներ, որոնց արդյունքում կերտվել է հայկական նորօրյա ամենամեծ ու փառապանծ հաղթանակը: 1988-ին շատերի պես Կարեն Մանվելյանն էլ Ազատության հրապարակում էր ու այնքան էր գոռացել «Ղարաբաղ», որ ձայնը կտրվել էր: Առաջին եռագույնն էլ կախվեց նրա պատշգամբում, սակայն միայն Ղարաբաղ գոռալով եւ դրոշ ամրացնելով չբավարարվեց:**




**«Չեմ կարող հանգիստ նստել ինստիտուտում, երբ ընկերներս կռվում եւ զոհվում են Ղարաբաղում», ասաց մորը 26-ամյա Կարեն Մանվելյանն ու մեկնեց զինկոմիսարիատ՝ կամավոր գրանցվելու եւ ռազմի դաշտ մեկնելու համար: «Ուսանող ես, ինչո՞ւ ես եկել», ասացին նրան զինկոմիսարիատում:**

**«Եկել եմ, որ կռվեմ», պատասխանեց Կարենը՝ հավելելով, որ իր տեղը կռվող մարտիկների կողքին է:**

**Մարտական առաջին մկրտությունը Արծվաշենում էր, առաջին ձեռքբերումը՝ Վահան գյուղում: Արծվաշենի անկումից հետո ահաբեկված գյուղացիները պատրաստվում էին գյուղը լքել, սակայն հայ մարտիկների անձնազոհության շնորհիվ գյուղը չընկավ: Հաջորդ կանգառը Լաչինում էր: Կարենը գիտակցում էր Լաչինի միջանցքի ազատագրման կարեւորությունն ու առաջին գծում պայքարում հայրենիքի ազատագրման համար՝ հավատով ու վստահությամբ, որ ապագայի հաղթանակի հիմնադրման մի քարն էլ ինքն է դնում:**

**1988-ին Ազատ Մնացականյանն էլ միացավ Հայոց համազգային շարժմանը: Նպատակը քաղաքական գործիչ դառնալը չէր, այլ ազգին օգտակար լինելը: Հենց այդ զգացումով համակված մեկնեց Սպիտակ ու մեկ շաբաթ որպես կամավոր մասնակցում էր փրկարարական աշխատանքներին: Հետո արդեն սկսվեց Արցախյան հերոսամարտն, ու Ազատը մեկնեց ռազմի դաշտ:**

**Ավագ լեյտենանտ Մնացականյանի վերջին կանգառը Հորադիզում էր: Այստեղ նա իր 30 մարտիկների հետ ամուր պահեց հայկական դիրքերը մինչեւ 1994թ. մարտի 3-ը: Այդ օրը թշնամու արկերն անդադար սուլում էին մեր դիրքերի վրայով: Խրամուղում նրա կողքին կապավորն Արամն էր: «Պառկիր, արկերը մեզ վրա են գալիս», ասաց հրամանատարը: Երբ հրետակոծությունն ավարտվեց, Արամը հրեց հրամանատարին. «Ազա՛տ. վե՛ր կաց, վերջացավ»: Բայց Ազատը լուռ էր:**

**Արցախյան ազատամարտի հերոսների պատմությունների հեղինակ Գոհար Մարտիկյանը պատրաստել է նաեւ ռադիոշարք, որն արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ազդարար» մրցանակին:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Թուրքիայի արտգործնախարարության Հայաստանի մասին էջը վերջերս թարմացվել է, սակայն կեղծիքը չի պակասել

Թուրքիայի արտգործնախարարության կայքէջի անգլերեն լեզվով տարբերակում Հայաստանի հետ հարաբերությունների մասին պատմող հատվածում որոշ փոփոխություններ են կատարվել, սակայն ապատեղեկատվությունը չի պակասել: Կայքէջի «Արտաքին քաղաքականություն» գլխի «Հարավային Կովկաս» բաժնում մի հատված նվիրված է Հայաստանի հետ հարաբերություններին: Եթե նախկինում այդ մասին միայն մեկ էջ էր նվիրված, ապա այսօր կիսով չափ կրճատվել է, փոխարենը տեղադրվել են 2009 թ. հոկտեմբերի 10-ին ստորագրված երկու արձանագրությունների տեքստերը:

Միասին ընթերցենք Հայաստանի հետ հարաբերությունների մասին պատմող կես էջը (http://www.mfa.gov.tr/turkey–s-political-relations-with-armenia.en.mfa): Կեղծիքներն սկսվում են հենց առաջին նախադասությունից: «Առաջիններից մեկը ճանաչելով Հայաստանի անկախությունը՝ 1991 թ. դեկտեմբերի 16-ին, Թուրքիան Հայաստանին տրամադրեց մարդասիրական օգնություն, քանի որ այդ երկիրը անկախության նախաշեմին դիմագրավում էր տնտեսական դժվարություններ, ինչպես նաեւ ջանքեր գործադրեց Հայաստանի՝ տարածաշրջանային ու Եվրատլանտյան հաստատություններին ինտեգրվելու ուղղությամբ»:

Այս առաջին նախադասության մեջ կա երկու ապատեղեկատվություն, երկու մեծ սուտ: Ճիշտ է, որ Թուրքիան առաջիններից մեկը, ավելի հստակ՝ չորրորդ երկիրն էր՝ Լիտվայից, Ռումինիայից ու Ռուսաստանից հետո, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը, սակայն Երեւանի հետ չհաստատեց դիվանագիտական հարաբերություններ՝ առաջ քաշելով մի քանի նախապայման: Ինչ վերաբերում է «մարդասիրական օգնություն» տրամադրելուն, ապա Թուրքիան Հայաստանին նման օգնություն ցույց չի տվել: Եթե խոսքը 1992 թ. նոյեմբերից Թուրքիայի տարածքով՝ Կարս-Գյումրի երկաթուղով եւ Մարգարայի կամրջով Եվրոպական միության վարկով 100 հազար տոննա ցորենի մատակարարումների մասին է, ապա դա օգնություն չէր, առավել եւս՝ թուրքական օգնություն չէր: Անշուշտ, Թուրքիան կարող էր թույլ չտալ, որ այդ ցորենը իր տարածքով հասնի Հայաստան, ինչպես անում է այսօր եւ արդեն ավելի քան 17 տարի՝ շրջափակման մեջ պահելով Հայաստանը: Չլիներ Թուրքիան, այդ ցորենը Հայաստան էր հասնելու այլ ճանապարհով: Իրանը առաջիններից մեկն էր, որ պատրաստակամություն էր հայտնել այդ նպատակով իր տարածքը տրամադրել:

Այստեղ արժե նաեւ հիշեցնել եւ ընդգծել, ընդ որում՝ նաեւ շատ հայ վերլուծաբանների համար, որ Թուրքիայի տարածքով 1992-1993 թթ. Հայաստան է հասել ոչ թե 100 հազար տոննա հացահատիկ, այլ մոտ 58 հազար, քանի որ Քարվաճառի (Քելբաջար) դեպքերից անմիջապես հետո՝ 1993-ի ապրիլի սկզբին, Թուրքիան կառավարական որոշումով փակեց Հայաստանի սահմանը: Սակայն, շատ հայ հեղինակներ, չճշտելով փաստերը, շարունակում են օգտագործել «100 հազար տոննա» սխալ թիվը: Ցավոք, ինչպես հայ, այնպես էլ Կովկասի հարցերով զբաղվող օտար հեղինակներ, մինչեւ այսօր իրենց հրապարակումներում գրում են, թե 1992-ին Թուրքիան նաեւ էլեկտրաէներգիա է տրամադրել Հայաստանին, այսինքն՝ մթի ու խավարի մեջ հայտնված Հայաստանին լույս է տվել: Սա եւս կեղծիք է, որը ժամանակին շրջանառության մեջ դրեցին թուրքերը, եւ մինչեւ այսօր այդ ապատեղեկատվությունը անցնում է մի հոդվածից մյուսը, մի զեկույցից՝ մեկ այլ զեկույց:

Թուրքիայի արտգործնախարարության կայքէջի՝ Հայաստանի հետ հարաբերությունների մասին պատմող կեսէջանոց հոդվածի առաջին նախադասության երկրորդ մասը եւս կեղծիք է, ընդ որում՝ ցինիկ կեղծիք: Թուրքիան ոչ միայն ջանքեր չի գործադրել Հայաստանի՝ «տարածաշրջանային ու Եվրատլանտյան հաստատություններին ինտեգրվելու ուղղությամբ», ինչպես գրված է կայքէջում, այլ լրիվ հակառակը՝ իր դաշնակից Ադրբեջանի հետ հետեւողականորեն Հայաստանին տնտեսապես, հետեւաբար նաեւ քաղաքական իմաստով, մեկուսացնելու թշնամական քաղաքականություն է իրականացրել: 1992 թ. հունվարին հենց թուրքերն էին, որ գործադրում էին ամեն ճիգ, որպեսզի Հայաստանը չդառնա ԵԱՀԿ (այն ժամանակ՝ ԵԱՀԽ) անդամ: Միայն ամերիկացիների՝ այն օրերին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի ու ԵԱՀԿ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Մարեսկայի ճնշումներից հետո Թուրքիան ստիպված եղավ հրաժարվել վետո կիրառելուց:

Կայքէջում թուրքերը հիշեցնում են նաեւ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ 2005-ի ապրիլին Հայաստանի այն ժամանակվա նախագահ Ռոբերտ Քոչարյանին հղած նամակը «պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու» եւ «1915 թ. դեպքերն ու զարգացումները գիտականորեն ուսումնասիրելու» մասին: Ինչպես հայտնի է, նախկին նախագահը Էրդողանին պատասխան նամակում շատ հստակ շարադրել է, թե ինչու Հայաստանը չի կարող ընդունելի համարել «պատմաբանների համատեղ հանձնաժողով» ձեւավորելու թուրքական առաջարկը: Այս մասին թուրքերը, ինչպես ԱԳՆ կայքէջում, այնպես էլ այլ մակարդակով, լռում են՝ տպավորություն ստեղծելով, թե Հայաստանն իրենց «կառուցողական» առաջարկներն անտեսում է:

Թուրքիայի արտգործնախարարության կայքէջի՝ Հայաստանի հետ հարաբերությունների մասին պատմող կեսէջանոց հոդվածն ավարտվում է 2009 թ. հոկտեմբերի 10-ին ստորագրված երկու արձանագրությունների թվարկումով: Ընդ որում, 2009 թ. փոխարեն գրված է 2010, ինչը, հավանաբար, տեխնիկական սխալ է:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Լրագրող, «Սիվիլիթաս» հիմնադրամի փորձագետ

# Միջազգային

Երեւանից ինքնաթիռով ընդամենը մեկ ժամ 15 րոպեի ճանապարհ, սակայն բոլորովին այլ քաղաքակրթություն, մշակույթ, մտածելակերպ ու կենսաձեւ: Կենսակերպի փոփոխությունը սկսվում է, երբ ինքնաթիռը վայրէջք է կատարում, եւ ուղեկցորդուհին հայտարարում է, որ գտնվում ենք Թեհրանում:

Արդեն ինքնաթիռում կանայք ստիպված են գլխաշոր եւ մինչեւ ծունկը հասնող հագուստ՝ մանթո կրել, հակառակ պարագայում մուտքն Իրան արգելված է: Ընդամենը երկու օր է հարկավոր նոր կյանքին ու հագուստին հարմարվելու համար: Թերեւս պատճառն այն է, որ ընտրության այլ տարբերակ չկա, իսկ փողոցներում փարանջայով շրջող կանանց տեսնելիս հասկանում ես, որ դու լավ ես «պրծել»:



## Թեհրան՝ ծայրահեղությունների քաղաք



Պարսկուհուն սովորական զբոսաշրջիկից առաջին հերթին տարբերում են հենց գլխաշորով: Եթե դու Թեհրանում բարեկամ կամ ընկերուհի չունես, այդպես էլ չես տիրապետի գլխաշոր կրելու նրբություններին: Տեղացիները զբոսաշրջիկ կանանց տարբերում են նաեւ ժպիտով եւ ծիծաղով: Չկարծեք, թե պարսկական ժպիտն ուրիշ է, բնավ, պարզապես պարսկուհիներն աշխատում են չժպտալ, չծիծաղել: Նրանք այն հազվագյուտ ազգերից են, որն ավելի քիչ են ժպտում, քան հայերը: Միայն մեկ տարբերությամբ՝ Երեւանում չեն ցանկանում ժպտալ, Թեհրանում դա գրեթե արգելված է: Իրանում կանացի ժպիտն ու ծիծաղը համարվում են մեղք, որն ուղղված է տղամարդուն գայթակղելուն: Տղամարդուն գայթակղող մեկ այլ «մեղք» էլ կանացի մազերն են:

Թեհրանում կարելի է հանդիպել երկու տիպի կանանց՝ կանայք, որ կրում են բացառապես մուգ հագուստ, չեն ժպտում, չեն շպարվում, փողոցում քայլում են գլուխները կախ ու գրեթե վազում: Հիմնականում հենց այս տիպի կանայք են աշխատանքում հասնում հաջողության, որովհետեւ այստեղ կնոջ զուսպ ու մռայլ հագուկապը միշտ խրախուսվում եւ գնահատվում է: Երկրորդ տիպի կանայք հագնում են չափազանց վառ հագուստ, վառ դիմահարդարում անում՝ փորձելով կոտրել կարծրատիպերը:

Ի տարբերություն կանանց, Իրանում պետությունը տղամարդու արտաքինի վրա որեւէ արգելք չի դնում, սակայն խստիվ արգելվում է խմիչքի օգտագործումը: Հեղափոխությունից հետո Իրանում փակեցին գիշերային ակումբները, բարերն ու խաղատները: Տարիքով կանայք մինչեւ հիմա սարսափով են հիշում թե գլխաշոր չկրող կանանց ինչպես էին նախկինում ողջ-ողջ այրում, խմիչք օգտագործող տղամարդկանց տանջամահ անում:

Արգելքներն ու խստությունը սակայն չսպանեցին Թեհրանում գիշերային կյանք հասկացությունը: Եթե ցերեկը երիտասարդների հանդիպման հիմնական վայրը այգիներն են, ապա երեկոյան ժամերին երիտասարդները դուրս են գալիս ավտոմրցման: Մոտ մեկ ժամ քաղաքի փողոցներում «շումախերությունից» հետո աղջիկը մեքենայի ազդանշանի կամ լույսի շնորհիվ երիտասարդին հասկացնում է հետեւել իրեն՝ փոխանակում են հեռախոսահամարներն, ու սկիզբ է դրվում սիրավեպի:

Ընդհանրապես Թեհրանը կարելի է ծայրահեղությունների քաղաք անվանել: Կարող ես տեսնել սեւ փարանջայով ոտքից գլուխ ծածկված կնոջ, որը մոտոցիկլ է վարում:

Թեհրանում հատուկ պաշտամունք կա կնոջ հանդեպ: Պարսիկ տղամարդիկ աչքի են ընկնում ոչ միայն առատաձեռնությամբ, կանանց հանդեպ հարգալից վերաբերմունքով, այլեւ, ի տարբերություն հայ տղամարդու, կնոջն օգնում են նաեւ խոհանոցում կամ տնային գործերում: Պարսիկ տղամարդիկ իրենց հիացմունքը կանանց գեղեցկության նկատմամբ արտահայտում են գլխի խոնարհմամբ: Դա նշանակում է, որ նա հիացած է եւ խոնարհվում է կնոջ գեղեցկության առաջ: Կնոջը հարվածելն Իրանում համարվում է մեծագույն մեղք եւ պատժվում մտրակի հարվածներով: Սակայն Իրանի առավել հետամնաց մարզերում եւ գյուղերում դեռեւս պահպանվում է բազմակնությունը: Եթե տղամարդը ցանկանում է երկրորդ կին ունենալ, ապա պետք է ստանա առաջին կնոջ համաձայնությունը: Տղամարդը կարող է նաեւ պաշտոնական սիրուհի ունենալ: Այդ ժամանակ կնոջ համաձայնությունը հարկավոր չէ, սակայն սիրուհու անձնագրում նշվում է «պաշտոնական սիրուհի» կարգավիճակը:

Իրանում մեծ թիվ են կազմում բարեկամների միջեւ ամուսնությունները, ինչի հետեւանքով հիվանդ երեխաների թիվն օրեցօր շատանում է:

Սովորույթները նույնպես աչքի են ընկնում ծայրահեղությամբ:

Հարսանիքներն առանձին են նշվում: Տղամարդիկ՝ առանձին, կանայք՝ առանձին: Իրանում ամենաընդունված կերակուրը բրինձն է: Պարսկուհիները բրնձի պատրաստման ավելի քան 10 եղանակ գիտեն: Ճաշատեսակներից յուրաքանչյուրն առանձնանում է գույնով եւ համով:

Այստեղ պետական մակարդակով են կանոնակարգված անգամ ճաշի եւ ընթրիքի ժամերը: Ժամը 1-ին Իրանում ճաշում են: Ժամը 2-5-ը հատկացնում հանգստին: Փակվում են խանութներն ու բանկերը, եւ քաղաքի վրա իջնում է հանգստություն: Այդ ժամերին ոչ միայն անտպատեհ լի այցելությունը, անգամ հեռախոսազանգը նպատակահարմար եւ ցանկալի չէ:

Թեհրանը հսկայական քաղաք է: Բնակչությունը մոտ 14 միլիոն է: Անգամ Թեհրանի բնակիչներն են դժվարանում ասել, թե որտեղ է սկսվում եւ ավարտվում մայրաքաղաքը: Ասում են՝ մի ծայրից մյուս մասն անցնելու համար անհրաժեշտ է 3-4 ժամ: Քաղաքի գլխավոր խնդիրը երթեւեկությունն է: Խցանումներից ազատվելու համար թեպետ կառուցվել են բազմաթիվ կամուրջներ, սակայն դրանք էլ իրավիճակը չեն փրկում: Գործում է նաեւ մետրո, սակայն հատկապես երեկոյան ժամերին քաղաքում կարող է գրանցվել 3-4 ժամ խցանում: Խայտառակ վիճակում է գտնվում նաեւ երթեւեկությունը: Չի պահպանվում երթեւեկության որեւէ կանոն: Անհնար է հանդիպել վարորդի, որ գոնե մեկ անգամ վթարի ենթարկված չլինի: Թեպետ պետությունն օրենք է սահմանել, որով զույգ եւ կենտ թվերով մեքենաները պետք է տարբեր օրերի երթեւեկեն, բայց դա էլ չի օգնում: Պատճառը վառելիքի մատչելիությունն է, ընտանիքի յուրաքանչյուր անդամ իր սեփական մեքենան ունի:

Թեհրանի հաջորդ խնդիրը էկոլոգիական մաքրությունն է: Առաջին հայացքից քաղաքը բետոնե կույտ է հիշեցնում: Վերջին շրջանում կառուցված այգիներն ու պուրակներն էլ չեն փրկում: Բնակիչները կատակում են, որ օդն այնքան կեղտոտ է, որ երեկոյան լուսինը խամրած է երեւում:

Պետությունը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում սպորտին: Նախագահի հրամանով եւ օժանդակությամբ մայրաքաղաքի բոլոր պուրակներում դրվել են մարմնամարզության համար նախատեսված սարքեր:

Իրավունքների պաշտպանության ու հնացած բարքերի դեմ հիմնականում ուսանողությունն է պայքարում:

Թեհրանում ծայրահեղությունը հասել է գագաթնակետին: Շատերն են հասկանում, որ այս վիճակը չի կարող երկար շարունակվել, որովհետեւ հաճախ այդ խստությունը վերածվում է ձեւականության:

Իրանը տուրիզմի հրաշալի վայր է: Բնակիչները պատմում են, որ երկրի տարբեր հատվածներ շրջելիս կարելի է միաժամանակ վայելել տարվա 4 եղանակներն էլ: Իսկ մշակութային օջախներն ու հին քաղաքների առկայությունը Իրանը դարձնում են զարգացած զբոսաշրջություն ունեցող պետություն:

Այստեղ զբոսաշրջիկներին շատ լավ են վերաբերվում: Եթե իմանում են, որ Իրանից չես, անգամ ժպտում են: Առաջին անգամ Իրանում հայտնված հայերին թող չզարմացնի, որ նրանք էլ են «Արմենիա»-ն շփոթում «Ռումինիայի» հետ: «Որտեղի՞ց եք» պատասխանեք «Արմանսթան», ու այդ ժամանակ հարցնողի դեմքի արտահայտությունն ու վերաբերմունքը կփոխվեն կամ կհիշի, որ վերջին Նովրուզն անցկացրել է Արմանսթանում, կամ այստեղ հայ ընկերներ ունի, որոնց շատ է սիրում եւ հարգում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թեհրան-Երեւան

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

## Ռ. Գեյթս. «Իրանին հարվածելը չի կասեցնի նրա միջուկային ծրագիրը»

Իրանին ռազմական հարված հասցնելը չի կարողանա կանխել այդ երկրում միջուկային զենքի ստեղծումը եւ միայն կհամախմբի իրանցիներին: Այդ մասին հայտարարել է ԱՄՆ պաշտպանության նախարար **Ռոբերտ Գեյթսը** «Ուոլ Սթրիթ ջորնըլ» թերթի ղեկավարության հետ հանդիպման ժամանակ:

Գեյթսը նշել է, որ հարձակումը միայն կհամախմբի ներկայումս մասնատված իրանցիներին: Ռազմական հարվածը կարող է տալ կարճատեւ դրական արդյունքներ, բայց ընդհանուր առմամբ իրավիճակը միայն կվատթարանա:

Պենտագոնի ղեկավարն արտահայտվել է հակաիրանական պատժամիջոցների շարունակման եւ տնտեսական ճնշման ուրիշ միջոցների կիրառման օգտին, նշում է Ռոյթեր գործակալությունը:

Գեյթսի խոսքերով, Իրանի ղեկավարությունում խոսրանում է գերագույն հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիի եւ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի պառակտումը: Խամենեին կասկածներ ունի, որ Ահմադինեժադը իրենից թաքցնում է Իրանի տնտեսության վրա պատժամիջոցների իրական ազդեցությունը, ինչպես նաեւ ֆինանսական ոլորտում տիրող իրավիճակը:

Որ ԱՄՆ-ը քննարկում է Իրանին ռազմական հարված հասցնելու հնարավորությունը, հայտնի է վաղուց: Նման սցենարը չէր բացառում նախկին նախագահ Ջորջ Բուշը: 2010-ի օգոստոսին ԱՄՆ շտաբների պետերի միացյալ կոմիտեի ղեկավար, ծովակալ Մայքլ Մալենը խոստովանեց հարձակման ծրագրի գոյությունը: Մամուլում նաեւ հաղորդումներ են հրապարակվել Իրանի միջուկային օբյեկտների վրա Իսրայելի գրոհների նախապատրաստման վերաբերյալ:

## Լիբանանը կստանա ռուսական տանկեր եւ ուղղաթիռներ

Լոնդոնում լույս տեսնող «Ալ Հայաթ» թերթը հաղորդում է, որ Ռուսաստանը որոշել է Լիբանանի բանակին նվիրել «Մի-24» տիպի 6 ուղղաթիռ, ինչպես նաեւ «Տ-72» տիպի 31 տանկ եւ 130 միլիմետրանոց 36 հրանոթ:

Մոսկովյան «Կոմերսանտ» թերթը իր հերթին տեղեկացնում է, որ Լիբանանը անվճար կստանա 10 ուղղաթիռ, իսկ մյուս զինատեսակների դիմաց այդ երկրի կառավարությունը ստիպված կլինի վճարել: Սակայն չեն բացառվում նաեւ ուրիշ անվճար մատակարարումներ, քանի որ Լիբանանը զենք գնելու միջոցներ չունի, իսկ ԱՄՆ-ի խոստացած 100 մլն դոլարը դժվար թե հնարավոր լինի օգտագործել այդ նպատակով:

Ռուսաստան կատարած այցելության ժամանակ Լիբանանի վարչապետ **Սաադ Հարիրին** ասել է, որ Իսրայելը ուրիշ երկրների վրա ճնշում է գործադրում, որպեսզի թույլ չտա զենքի մատակարարում լիբանանյան բանակին: Իսրայելում գտնում են, որ բոլոր զինատեսակները անմիջապես կհայտնվեն «Հզբոլլահի» արմատականների ձեռքին: Որոշ լրատվամիջոցների տվյալներով, ռուսաստանցի մի խումբ հրահանգիչներ շուտով Լիբանան կմեկնեն զինվորներին նոր տեխնիկայից օգտվել սովորեցնելու նպատակով:

Տանկերից եւ ուղղաթիռներից բացի, լիբանանցի զինվորականները ուզում են ձեռք բերել նռնականետներ եւ հակաօդային պաշտպանության նոր միջոցներ: Նրանք շահագրգռված են նաեւ հին տեխնիկայի, այդ թվում՝ «Տ-55» տանկերի արդիականացմամբ, գրում է «Իզվեստիա» թերթը:

Վարչապետներ Սաադ Հարիրին եւ Վլադիմիր Պուտինը քննարկել են նաեւ տնտեսական համագործակցության հարցեր: Լիբանանը ռուսաստանցի կապալառուներին առաջարկում է մասնակցել երկրի էներգամատակարարման համակարգի կատարելագործմանը, Միջերկրական ծովի արեւելքում նավթի ու գազի հանքաշերտերի հետախուզմանը:



## Հ. Վան Ռոմպեյ. «Եվրոգոտին պետք է հաղթահարի պարտքի ճգնաժամը»

ԵՄ նախագահ Հերման Վան Ռոմպեյը հայտարարել է, որ եվրոգոտին չի գոյատեւի, եթե չկարողանա հաղթահարել պարտքի ճգնաժամը, որը 2010-ին լուրջ խնդիրներ է առաջացրել եվրոգոտու անդամ մի շարք երկրներում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

«Մենք բոլորս պարտավոր ենք ջանալ, որ եվրոգոտին գոյատեւի, քանզի դրա տրոհման դեպքում կտրոհվի նաեւ ամբողջ Եվրամիությունը: Բայց ես վստահ եմ, որ մենք դա կհաղթահարենք», հայտարարել է ԵՄ նախագահը:

Նոյեմբերի 15-ին հայտնի դարձավ, որ Իռլանդիան բանակցություն է վարում ԵՄ-ից եւ ԱՄՀ-ից օգնություն ստանալու նպատակով: Այդ միջազգային կազմակերպությունները 2010-ին արդեն մոտ 110 միլիարդ եվրո են հատկացրել պարտքի ճգնաժամի մեջ հայտնված Հունաստանին օգնելու համար:

Հունաստանն իր հերթին հայտարարում է, որ կարող է ուշացնել իրեն հատկացված վարկերի վերադարձը: Աթենքին վարկի հերթական հատկացումը հայտնվել է հարցականի տակ, քանի որ նոյեմբերին պարզվեց, որ Հունաստանի կառավարությունը ԵՄ-ին չի հայտնել իր բյուջեի պակասորդի իրական չափերը:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ եվրոգոտու երկրներից նաեւ Պորտուգալիան նախազգուշացրել է, որ հավանաբար ինքը ֆինանսական օգնություն կխնդրի: Դա պայմանավորված է նրանով, որ Լիսաբոնը ներկայումս չի կարողանում բաց շուկայում միջոցներ գտնել չափազանց բարձր տոկոսադրույքների պատճառով:

Եվրոգոտու անդամների թիվը 16 է: 17-րդ պետությունը՝ Էստոնիան, արժութային միությանը կանդամակցի 2011-ի հունվարից:

# Մշակույթ

ՄԱՍԱՉՈՒՍԵԹՍ

## Նշվել է Ալան Հովհաննեսի 100-ամյակը

Արեւելքի եւ արեւմուտքի երաժշտական մշակույթների համադրման գործում նշանակալի ավանդ ներդրած, Սոմերվիլում (Մասաչուսեթս, ԱՄՆ) ծնված հայ անվանի կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի (Չախմախչյան) ծննդյան 100-ամյակի տոնակատարության շրջանակներում, «Նյուտոն սիմֆոնիկ նվագախմբի» կազմակերպությամբ եւ «Ամերիկայի հայկական գրադարանի եւ թանգարանի» (ԱԳԹԿ) աջակցությամբ նոյեմբերի 14-ին Մասաչուսեթսի «Նյուտոն Քորների» Ռաշի դահլիճում տեղի է ունեցել «Հայկական երաժշտության խորհրդավոր գեղեցկությունը» վերնագրով հանդիսավոր համերգ, որի ընթացքում հնչել են Ալան Հովհաննեսի «Սուրբ Գրիգորի աղոթքը» եւ «Սիմֆոնիա N 2. Խորհրդավոր լեռը», ինչպես նաեւ Արամ Խաչատրյանի «Դիմակահանդես սուիտը» եւ «Ջութակի կոնցերտը» ստեղծագործությունները: Վերջինիս կատարումը վստահված է եղել Բոստոնի «Փոփս էսպլանադե նվագախմբի» ղեկավար Ջոզեֆ Շիրին:

Այս մասին խմբագրությանը հասցեագրված ԱՀԳԹ-ի հաղորդագրության մեջ նշվում է, որ իրենց անդամների համար կազմակերպիչ մարմինը սահմանել է տոմսերի զեղչյալ գին:

Հ. Ծ.

## Հայկական մանկություններ




Մարսելի «Պարենթեզ» հրատարակչությունը լույս է ընծայել յուրահատուկ մի ֆրանսերեն հատոր՝ «Մանկության մեր հողերը. հուշերի Հայաստանը» վերնագրով: Անահիտ Տեր-Մինասյանի եւ Հուրի Վարժապետյանի աշխատակցությամբ մեկ «հարկի» տակ են հավաքվել 44 հայ եւ հայազգի հեղինակներ՝ ամենատարբեր բնագավառներից: Նրանց ինքնակենսագրական եւ հուշագրական գրքերից ընտրված են հատվածներ, որ վերաբերում են մանկությանը: Իսկ հայ մարդու բնակության աշխարհագրությունը, ինչպես երեւում է սույն հատորից, բավական ընդարձակ է՝ Նյույորքյան արվարձանից մինչեւ Թեհրան, Բաղդադից Բաքու, Երեւանից Ստամբուլ, Բեյրութից Տրապիզոն, Փարիզից Մուշ: Իսկ ժամանակը ներառում է քսաներորդ դարի սկզբից մինչեւ 1960-ականների կեսերը (միակ բացառությունը 19-րդ դարի հեղինակ Մատթեոս Մամուրյանն է): Ժողովածուում տեղ են գտել ինչպես հայ արձակի դասականներ, թե՛ հայտնիներ (Ավետիս Ահարոնյան, Զաբել Եսայան, Վահան Թոթովենց, Համաստեղ, Նիկողայոս Սարաֆյան, Հրանտ Մաթեւոսյան, Հակոբ Մնձուրի, Անդրանիկ Ծառուկյան, Վահե Օշական) եւ թե՛ նվազ ճանաչվածներ (Պերճուհի Բարսեղյան, Լաս, Շավարշ Նարդունի, Զավեն Պիպեռյան, Հրաչ Զարդարյան): Համեմատաբար քիչ են ժամանակակից գրողները՝ հայաստանցի թե սփյուռքահայ (Արմեն Շեկոյան, Վիոլետ Գրիգորյան, Գրիգոր Պըլտյան, Մկրտիչ Մարկոսյան): Անտեսված չեն նաեւ այնպես օտարալեզու գրողները (Նինա Բերբերովա, Վիլյամ Սարոյան, Արթյուր Ադամով, Լեւոն-Զավեն Սյուրմելյան, Մայքլ Առլեն, Փիթեր Բալաքյան, Սեդա): Իրենց մանկության դրվագների ներկայացմամբ հանդես են բերված նաեւ պարուհի Արմեն Օհանյանը, նկարիչներ Մարտիրոս Սարյանը եւ Գառզուն, լուսանկարիչ Արա Կյուլերը, կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը, խորհրդային պետական գործիչ Անաստաս Միկոյանը, խորհրդային եւ ռուսական մարդու իրավունքների պաշտպան Ելենա Բոները: Հայկական մանկությունների 346 էջանոց այս գունեղ խճանկարն օժտված է նաեւ համառոտ կենսագրացանկով:

Ա. Բ.

## Քանդակագործը՝ հոգուս Երուսաղեմի Հայկական թաղամասի

Ամերիկահայ քանդակագործ Մայքլ Արամն իր յուրօրինակ «Հավիտենական հաստատակամություն» խորագրով քանդակն էլեկտրոնային աճուրդի է հանել, մտադրվելով ստացված գումարը տրամադրել «Փրկենք Հայկական թաղամասը» կազմակերպությանը, որի նպատակն է Երուսաղեմի հայերի պատմական եւ մշակութային ներկայության մասին իրազեկել աշխարհին եւ վառ պահել հայկական թաղամասի աշխուժությունը Հին Քաղաքում: Այս մասին է տեղեկացնում «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը, հավելելով, որ Արամը մշտապես ընդլայնում է իր հետաքրքրասիրությունների շրջանակը, միշտ սակայն հավատարիմ մնալով իր հայկական արմատներին: Պապը Խարբերդի գյուղերից մազապուրծ եղել է եւ սրտաճմլիկ մանրամասներ պատմել Արամին: Նա սկզբում մետաղալարերով է սկսել աշխատել, հետո նաեւ անցել այլ՝ այդ թվում ցողունների եւ ծառերի բների օգտագործմանը: Վերոնշյալ յուրատեսակ «խաչքարը» հենց այդպիսին է եւ ներկայացնում է ծիրանի մի ծառ, որն իր նոր ճյուղով քանդում է հայերին ճնշելու կամ նրանց գործունեությունը սահմանափակելու բոլոր փորձերը եւ հաստատակամություն ցուցաբերում հավերժ գոյատեւելու: Ճյուղի վրա աղավնին է նստած, խորհրդանշելով «Սուրբ հոգին», իսկ տորոնում ընկած տերեւները հուշում են ցեղասպանությանը զոհ գնացածների մասին: Տարածված «թեւերը»՝ վերապրողներն են: Քանդակում օգտագործված է նաեւ բրոնզը, մուգ ոսկեգույն եւ արծաթապատ:

Քանդակը աճուրդի վերջին օրը՝ հոկտեմբերի 21-ին ցուցադրվել է Չիկագոյի 1015 W. Armitage հասցեում գտնվող «Տաբուլա Տուա» կաֆե-մշակութային կենտրոնում, որտեղ հատուկ ընդունելություն է կազմակերպվել Մայքլ Արամի պատվին: Ներկա են եղել հիմնարկության սեփականատեր Գրեյս Յան-Վուն, «Փրկենք Հայկական թաղամասը» կազմակերպության համահիմնադիրներից Մարի Ղուկասյանն ու Քերի եւ Մայքլ Նահապետյանները՝ ՆԱՀԱ ռեստորանային համալիրից, որոնք Միջերկրականյան ճաշատեսակներով «համեմել» են երեկոն: Գրեյս Յան-Վուն 1994-ից ի վեր քաջալերել է Արամին եւ այս անգամ էլ կենտրոնի վաճառքից գոյացած գումարի 10 տոկոսը նա նվիրաբերել է «Փրկենք Հայկական թաղամասը» կազմակերպությանը:

«Երուսաղեմի այդ թաղամասը պատմական մեծ արժեք է ներկայացնում եւ մենք ամեն կերպ պետք է պահպանենք այն», նշել է Մայքլ Արամն իր խոսքում:

Հ. Ծ.

## Երեք հեղինակ

«Երաժշտական կամուրջ» (ԱՄՆ-Հայաստան) նախագծի շրջանակներում, որի կազմակերպիչը Էդուարդ Սադոյանն է, տեղի ունեցավ «Երեք հեղինակ» հերթական համերգը: Երեւանյան հասարակությանը ներկայացվեցին արդեն ծանոթ կոմպոզիտորներ Մերիլին Բլիսը (Նյու Յորք), Հայկ Բոյաջյանը (Լեքսինգտոն) եւ Էդուարդ Սադոյանը (Երեւան): Ինչպես անցյալ տարվա այցելության ժամանակ (տե՛ս մեր հոդվածը «**Ազգում**» 2009-ի ապրիլի 26-ին), ամերիկացի հեղինակները ներկա էին Ա. Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում կայացած համերգին: Կատարողների մեջ էին նախագծի ինչպես մշտական, այնպես էլ նոր մասնակիցներ: Դրանք են միջազգային մրցույթների դափնեկիր Գայանե Գեղամյանը (սոպրանո), դիրիժոր, նոր երաժշտության տարածող, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի այդ օրվա ղեկավար Ռուբեն Ասատրյանը, կոնսերվատորիայի դասախոս Աննա Ճուղուրյանը (դաշնամուր) եւ կոնսերվատորիայի ուսանող, բայց կատարողական փորձ ունեցող Հարություն Նահապետյանը (ֆլեյտա):




Ավա՜ղ, կարելի է ափսոսալ ԱՄՆ արդի երաժշտական մշակույթի հետ անչափ թույլ շփումների առնչությամբ: Հարուստ եւ բազմաոճ այդ մշակույթը քիչ հայտնի է Հայաստանում: Ջազի եւ ռոքի աստղերի ակտիվացած հյուրախաղերի ֆոնի վրա ընդգծված կերպով ստվերում է մնում ակադեմիական երաժշտությունը: Դրա բացակայությունը չի մտահոգում նույնիսկ Երեւանում աշխատող բազմաթիվ ամերիկացիներին: Այնինչ ժամանակին՝ 1992-ին մեզ մոտ հնարավոր էր ԱՄՆ երաժշտության մեծ համերգ (առաջիններից մեկը իմ «Նոր երաժշտական նախաձեռնություններ» ցիկլում) կազմակերպել այդ երկրի դեսպանատան աջակցությամբ...

1992-ին սկսվեց նաեւ Է. Սադոյանի լուսավորչական գործունեությունը, որն ուղղված է երկու երկրների կոմպոզիտորների մասնագիտական շփումների հաստատմանը: Ներկայիս նոյեմբերյան համերգը (թվով 16-րդը) հատկանշական էր նրանով, որ միավորում էր կամերային եւ սիմֆոնիկ ստեղծագործություններ, որոնց մի մասը հնչում էր առաջին անգամ: (Ի դեպ, ուզում ենք կարծել, որ այստեղ եկող ամերիկացի կոմպոզիտորներն իրենց երկրում գոնե ինչ-որ ձեւով տարածում են հայ երաժշտական մշակույթի ժամանակակից ձեռքբերումները):

Թեեւ գրախոսվող համերգի ծրագիրը ներառում էր տարբեր տարիների հորինված ընդամենը վեց ստեղծագործություն, այդուհանդերձ դրանցով կարելի էր դատել հեղինակների գեղարվեստական եւ ոճաբանական հետաքրքրությունների մասին: Այսպես, Հայկ Բոյաջյանը (ծնվ. 1938), որի երաժշտությունը պարբերաբար հնչում է Հայաստանում, ներկայացավ որպես ազատ-զուգորդական մտածողության տեր կոմպոզիտոր: Այդ պատճառով նրա ստեղծագործություններին բնորոշ է առանձնահատուկ պարադոքսային տրամաբանություն՝ թեմատիկ նյութի եւ տեմբրերի զարգացման անսպասելի շրջադարձեր, իմաստի փոխաբերականություն: Առավել վառ տպավորություն գործեց 2009-ին նրա հորինած «Երեւակայական նախերգանքը» («Ouverture imaginaire») սիմֆոնիկ նվագախմբի համար: Ավանդական նախերգանքների ստանդարտը հաղթահարելով՝ Բոյաջյանը իր երաժշտության մեջ միտումնավոր պերճության եւ պարոդիականության տարր է ներմուծում պղձնյա խմբի պիեսում գերիշխող ակորդային ելքի միջոցով: Կոմպոզիտորի յուրօրինակ մտահղացումը ճիշտ տեսանկյունից լուսաբանեցին դիրիժոր Ասատրյանը եւ նվագախմբի երաժիշտները:

Հիմնական բովանդակությունը հարստացնող այլաբանականությունը զգացվում էր Բոյաջյանի նաեւ կամերային երկերում: Մենանվագ ֆլեյտայի «Եռամիություն» («Triaco») պիեսում, որը ջանադրաբար կատարեց Նահապետյանը, ծորուն «հովվերգական» հնչյունները տարօրինակ կերպով զուգորդվում էին սկերցոյական նվագի հետ: Իսկ գվինեացի բանաստեղծ Լեոն Դամասի ֆրանսերեն տեքստով ձայնի եւ դաշնամուրի համար գրված «Հոկետ» («Hoquet») վոկալ ցիկլում պատկերային տեսարանները եւ ազատ երաժշտական արձագանքները (օրինակ, «Մարսելյեզը») հարեւանում էին վոկալ ասերգության հետ: Երգչուհի Գայանե Գեղամյանի եւ դաշնակահարուհի Աննա Ճուղուրյանի կատարողական լուծումը մեծապես պայմանավորված էր երաժշտության գրական-բանաստեղծական հիմքով:

Բանաստեղծական տեքստերի շարահյուսական նշանակությունը էլ ավելի մեծ չափով բնութագրում էր նրբագեղ կոլորիտով «Հուացու լեռը» («Huatzu Hill») ցիկլը սոպրանոյի եւ փոքր նվագախմբի համար՝ 8-րդ դարի չին բանաստեղծ Վան Վեյի տեքստի անգլերեն թարգմանությամբ: Երաժշտության հեղինակ Մերիլին Բլիսը (ծնվ. 1954) իր ստեղծագործությունը արդեն երկրորդ անգամ է ցուցադրում Երեւանում եւ, պետք է ասել, ոչ իզուր: Գեղագիտությամբ (նվագախմբային պարտիայի դերով, տեմբրերի զուտ իմպրեսիոնիստական ներկապնակով, վոկալի գծային թվերգայնությամբ) Ի. Ստրավինսկու «Երեք ճապոնական բանաստեղծությանը» մերձավոր Բլիսի ստեղծագործությունը ծնում է տպավորիչ երաժշտական պատկեր: Նվագախմբային նկարչությունը սկսվում է նախերգանքից, որտեղ ֆլեյտայի եւ կլառնետի բարձր հնչյունների սրությունը ստեղծում է մշուշի մեջ քողարկված լեռնագագաթի միստիկական պատկերը: Նվագախմբային պարտիտուրը հատկանշական է կարճ ֆրազների շարժունությամբ, որոնք այն ժամանակ երիտասարդ (ստեղծագործությունը հորինված է 1979-ին) հեղինակին թույլ են տալիս ստեղծել նրբագեղ օստինատային կազմվածքներ:

Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա ստեղծագործության կատարումը դարձավ համերգի բարձրակետը: Նորագույն երաժշտության կատարման առաջատար երգչուհի Գեղամյանի եւ Ասատրյան-դիրիժորի ստեղծագործական փոխըմբռնումը որոշեց գեղարվեստական որակի եւ անհատական անկրկնելիության ցանկալի համադրությունը:

Բլիսի «Շղարշներ» («Veils») սիմֆոնիկ պիեսը թեեւ ստեղծված է 2006-ին, բայց հիշյալ վոկալ ցիկլի հետ ընդհանրություն ի հայտ բերեց ֆակտուրայի ընդհատվող շերտավորությամբ: Գրության հենց այդ առանձնահատկությունը, ինչպես նաեւ նվագախմբի երկխոսական մենաբանությունը Բլիսի ընդհանուր առմամբ նեոռոմանտիկական պիեսը դարձնում են արդիականության արգասիք:

Էդուարդ Սադոյանի (ծնվ. 1938) «Հրաշքների երազ» մանկական բալետի երեք պարերը (անտառի տիրուհու պարը, տարեցների պարը, ժողովրդական պարը) ավարտեցին ծրագիրը: Կոմպոզիտորը բալետն ավարտել է վերջերս, թեեւ դրա պարտիտուրի վրա ընդհատումներով աշխատել է շատ տարիներ՝ ուրիշ երկերին զուգընթաց: Առհասարակ մանկական թատերական երաժշտությունը, մանավանդ բալետը երեխաների դաստիարակության համար անհրաժեշտ բնագավառ է: Հիշում եմ, թե մեր երեխաները ինչպիսի տրամադրությամբ էին գնում դիտելու Տիգրան Մանսուրյանի «Ձյունե թագուհին» եւ Ստեփան Լուսիկյանի «Ճպուռն ու մրջյունը» բալետները: Երեխաները պետք է հնարավորություն ունենան բեմի վրա տեսնելու իրենց հեքիաթների եւ երազանքների աշխարհը:

Համերգներին ներկայացված Սադոյանի բալետի հատվածները վկայում են մանկական ընկալման համար դրանց մատչելիության եւ վառ պատկերավորության մասին: Նվագախումբը գունագեղ արտահայտչականությամբ բնութագրում է բալետի հերոսներին, ոգեւորում ծանոթ պարային ռիթմերով եւ ժողովրդական մեղեդիներով: «Քոչարի» եւ «Լեպո լե լե»՝ ո՞վ չի սիրում այդ պարերի մեղեդիները: Պետք է արդեն պատկերացնել, թե դրանք որքան հաջող կդիտվեն բեմից՝ մանկական երեւակայությանը համապատասխանող պարարվեստով:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

## Գրական երեկույթ Գլենդելում

Արձակագիր Պողոս Գուբելեանի «Այն միւս փողոցը» խորագրով վիպակը լոյս է տեսել Երեւանում: Կալիֆորնիայի Հայ գրողների միութիւնը (ԿՀԳՄ) շնորհանդէսով ներկայացրեց այն գրասէր հասարակութեանը Գլենդէլում «Տէր-Ղազարեան» սրահում, 2010 նոյեմբերի 11-ին: ԿՀԳՄ նախագահ բանաստեղծ Գրիշ Դաւթեանը ներածական խօսքով մեկնարկում է երեկոն եւ «Պողոս Գուբելեանի գրականութիւնը» գրական ակնարկով արժեւորում է հեղինակին: Հանդիսավարում է լրագրող Նունէ Աւագեանը: Ողջոյնի խօսքերից հետո արձակագիր Սահակ Թուրչեանը ներկայացնում է ընդարձակ գրական զեկոյց: Սեդա Հայկը ընթերցումներ է կատարում վիպակից: Փիթեր Հայկը կիթառի նուագակցութեամբ հնչեցնում է երգեր: Ապա խօսքը տրւում է հեղինակին, որ երեկոյթի կազմակերպման համար իր սրտագին շնորհակալութիւններն է յայտնում: Երեկոյթը աւարտւում է գինեձօնի արարողութեամբ, գրչընկերներով շրջապատուած հեղինակը գինով թրջում է գիրքը:

## Մարզական

# Ֆեդյա Ալեքսանյան. «Տարին հաջող էր պատանի բռնցքամարտիկների համար»

***Օրերս Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում անցկացվեց ՀԱՕԿ-ի 20-ամյակին նվիրված բռնցքամարտի պատանեկան խոշոր մրցաշար: Այստեղ էլ կայացավ մեր զրույցը բռնցքամարտի Հայաստանի պատանեկան հավաքականի ավագ մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանի հետ:***



ՖՈՏՈԼՈՒՐ

**- Պարոն Ալեքսանյան, ի՞նչ նպատակ էր հետապնդում այս մրցաշարը եւ ինչպիսի՞ն են տպավորությունները մասնակիցներից:**

- Նպատակը մեր պատանի բռնցքամարտիկների պատրաստվածությունը եւս մեկ անգամ ստուգելն ու պատանեկան հավաքականի կազմավորելն էր: Սա մեր պատանեկան բռնցքամարտի ուժերի յուրօրինակ ստուգատես էր: Քաշային13 կարգերում ռինգ էին դուրս եկել 166 բռնցքամարտիկներ Հայաստանի տարբեր մարզերից: Բացի այդ էլ, կային մինչեւ 40 կգ քաշային բռնցքամարտիկներ, որոնք մասնակցեցին հաշվարկից դուրս: Այս մրցաշարը հնարավորություն ընձեռեց հայտնաբերելու լավագույն, հեռանկարային մարզիկների, որոնք կընդգրկվեն Հայաստանի պատանեկան հավաքականում, որը նախապատրաստվելու է հաջորդ տարի Ղազախստանի Աստանա քաղաքում կայանալիք աշխարհի պատանեկան առաջնությանը:

Ըստ քաշային կարգերի չեմպիոններ դարձան Հայրիկ Նազարյանը (46 կգ, Գավառ), Էրիկ Պետրոսյանը (48 կգ, «Հայաստան» ՄՄ, քոլեջ), Շավարշ Սողոյանը (50 կգ, «Աշխատանքային ռեզերվներ», քոլեջ), Արիստակես Ալոյանը (52 կգ, «Հայաստան» ՄՄ), Ավետիս Աղաջանյանը (54 կգ, քոլեջ), Արշակ Գրիգորյանը (57 կգ, քոլեջ), Ռաֆայել Բարսեղյանը (60 կգ, Գյումրի), Դավիթ Սարգսյանը (63 կգ, Վանաձոր), Արսյոմ Գալստյանը (66 կգ, Վանաձոր), Արամ Իփլինյանը (70 կգ, Վանաձոր), Անդրանիկ Արուսյանը (75 կգ, Էջմիածին), Էրիկ Բաղինյանը (80 կգ, բռնցքամարտի հանրապետական մարզադպրոց) եւ Արսեն Ավագյանը (80 կգ-ից բարձր, բռնցքամարտի հանրապետական մարզադպրոց):

Նշեմ, որ օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի ղեկավարությունը (տնօրեն՝ Դերենիկ Գաբրիելյան) բոլոր պայմանները ստեղծել էր մրցաշարի նորմալ անցկացման համար: Մեզ հետ միասին մենամարտերին հետեւում էին նաեւ բռնցքամարտի հանրապետական ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Լեւոն Հովհաննիսյանը, ֆեդերացիայի փոխնախագահ Սամվել Գասպարյանը, սպասարկող անձնակազմի մեջ էին Համլետ Բեգոյանն ու Հարություն Պրազյանը: Նշեմ նաեւ մեկ հատկանշական փաստ: Մենամարտերի մրցավարությանը ներգրավել էին նաեւ մասնակիցների մարզիչներին, որոնց կողմից կողմնակալության ոչ մի դեպք չարձանագրվեց:

**- Ասացիք, որ պատանեկան հավաքականը նախապատրաստվելու է աշխարհի առաջնությանը: Ինչպիսի՞ն է նախապատրաստական ծրագիրը:**

- Մրցաշարի արդյունքներով կկազմավորվի հավաքականը, որը կսկսի մարզումները: Արդեն դեկտեմբերին նախատեսվում է Մոսկվայում մասնակցել օլիմպիական չեմպիոն Բորիս Լագուտինի հուշամրցաշարին: 2008-ին մենք արդեն մասնակցել ենք այդ մրցաշարին եւ լավ արդյունքներ ենք ցույց տվել: Հունվարին կկայանա հանրապետության պատանեկան առաջնությունը, որի արդյունքներով արդեն վերջնական տեսքի կբերվի հավաքականի կազմը: Իսկ փետրվարի 22-28-ը կմասնակցենք Կալինինգրադում անցկացվելիք միջազգային մրցաշարին: Կլինեն նաեւ այլ մրցումներ, որոնց բովով անցնելով, մեր պատանի բռնցքամարտիկները մրցակցային զգալի փորձ ձեռք կբերեն, կստուգեն իրենց պատրաստվածությունը, կբացահայտեն ունակությունները: Այս ամենը թույլ կտա պատշաճ ձեւով նախապատրաստվելու տարվա գլխավոր ստուգատեսին՝ աշխարհի առաջնությանը: Մրցաշարը ցույց տվեց, որ պատանեկան բռնցքամարտում աճ է զգացվում Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի մարզերում, Էջմիածնում, Գյումրիում, Վանաձորում:

**- Մրցաշրջան-2010-ն ավարտվում է: Ինչպիսի՞ն էր այն հայ պատանի բռնցքամարտիկների համար:**

- Ընդհանուր առմամբ մրցաշրջանը պետք է հաջող համարել մեր պատանի բռնցքամարտիկների համար: Տարվա գլխավոր մրցումը Լվովում անցկացված Եվրոպայի առաջնությունն էր, որում մեր հավաքականը նվաճեց 2-ական արծաթե եւ բրոնզե մեդալ: Սակայն կարող եմ ասել, որ մրցավարները 46 կգ քաշային Հենրիկ Մոքոյանից պարզապես գողացան ոսկե մեդալը ու նվիրեցին նրա ուկրաինացի մրցակցին: Արծաթե մեդալի արժանացավ նաեւ 50 կգ քաշային, վանաձորցի Արթուր Ներսիսյանը: Իսկ երեւանցի Գոռ Երիցյանը (57 կգ) եւ վանաձորցի Ռաֆայել Սիմոնյանը (ծանր քաշ) դարձան բրոնզե մրցանակակիրներ:

Մինչեւ Եվրոպայի առաջնությունը մեր բռնցքամարտիկները հաջող ելույթներ ունեցան նաեւ Կալինինգրադի միջազգային մրցաշարում: Հուսանք, որ հաջորդ տարի եւս մեր պատանի բռնցքամարտիկները կդրսեւորեն մենամարտելու իրենց ունակությունները եւ մեդալների հարուստ ավարով կվերադառնան միջազգային մրցասպարեզներից՝ բարձր պահելով Հայաստանի մարզական պատիվը:

# Երկվորյակ եղբայրները Եվրո-2012-ի թալիսման

**Վարշավայում ներկայացվել է 2012-ի ֆուտբոլի Եվրոպայի առաջնության թալիսմանը՝ երկվորյակ եղբայրները: Նրանցից մեկը կարմրասպիտակավուն հագուստով է, որը խորհրդանշում է Լեհաստանը, մյուսը՝ դեղնակապտավուն՝ խորհրդանշելով Ուկրաինան: Երկվորյակների մազերը եւս ներկված են այդ երկրների ազգային դրոշների գույներով:**

**Հանդիսավոր արարողությանը ներկա են գտնվել Լեհաստանի եւ Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիաների նախագահներ Գժեգոժ Լյատոն ու Գրիգորի Սուրկիսը:**

**«Երկու թալիսմանները խորհրդանշում են մեր երկրների ընդհանուր ջանքերը Եվրո-2012-ի հաջող կազմակերպման համար: Մենք կիսում ենք միեւնույն գաղափարները եւ սպասում, որ առաջնությունում ջերմ եւ ուրախ մթնոլորտ կթեւածի: Թալիսմաններին միայն մի բան է առանձնացնում. նրանք երկրպագելու են տարբեր թիմերի», նշել է Սուրկիսը:**



**«Ինձ բոլորից շատ դուր է եկել երկվորյակ եղբայրների սանրվածքը: Այս օրը մեզ համար առանձնահատուկ է եւ լավ գովազդ է Եվրոպայի առաջնության համար», հայտարարել է Լյատոն:**

**Երեկ Ժնեւում կայանալիք Շվեյցարիա-Ուկրաինա հանդիպումից առաջ Անդրեյ Շեւչենկոն Օլեգ Բլոխինի հետ պետք է թալիսմանը ներկայացնեին հանդիսականներին: Նույնպիսի արարողության մասնակիցներ պետք է դառնային Անջեյ Շարմախն ու Զբիգնեւ Բոնեկը Պոզնանում կայանալիք Լեհաստան-Կոտ դ՛Իվուար ընկերական խաղից առաջ:**

**Անդրեյ Շեւչենկոն գոհ է թալիսմանից. «Երկու որդի ունեմ եւ կցանկանայի, որ թալիսմանը նրանց դուր գար: Վստահ եմ, որ երեխաները կհավանեն թալիսմանը: Բացի այդ, թալիսմանները լավ են ֆուտբոլ խաղում, ինչը Եվրոպայի առաջնության համար կարեւոր հանգամանք է»:**

**Այժմ մնում է միայն երկվորյակ եղբայրներին անվանակոչել: ՈՒԵՖԱ-ն առաջարկել է քվեարկությամբ թալիսմաններին անվանակոչել անունների հետեւյալ 3 տարբերակներից. Սլավեկ եւ Սլավկո, Սեմկո եւ Ստրիմկո, Կլեմեկ եւ Լադկո: Քվեարկությունը տեղի կունենա դեկտեմբերի 3-ին: Նշենք, որ թալիսմանի հեղինակը Warner Bros կինոընկերությունն է:**

## ՇԱԽՄԱՏ

# Առոնյանը միանձնյա առաջատարն է

Մոսկվայում ընթացող կայծակնային շախմատի աշխարհի առաջնությունում երեկ կայացան 15-28-րդ տուրերը: Թեեւ նախորդ օրվա համեմատ Լեւոն Առոնյանը 1,5 միավոր պակաս վաստակեց՝ իր օգտին գրանցելով 8,5 միավոր, սակայն դա էլ բավական էր մոտակա հետապնդողներից պոկվելու եւ 18,5 միավորով միանձնյա առաջատարի դերը ստանձնելու համար: Իսկ ահա նրա հետ նախորդ օրը աղյուսակը գլխավորած Մագնուս Կառլսենը միավորների քանակն ավելացրեց ընդամենը 7-ով եւ 17 միավորով ընթանում է 2-րդ տեղում: 16-ական միավորով հաջորդ տեղերում են Թեյմուր Ռաջաբովը, Յան Նեպոմնյաշչին եւ Վլադիմիր Կրամնիկը: Այնպես որ Առոնյանը լավ հնարավորություն ունի նվաճելու կայծակնային շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսը, եթե այսօր կայանալիք ավարտական 10 տուրերում եւս վստահ խաղ ցուցադրի:

Ինչպես եւ նախորդ օրը, այս անգամ էլ մեկնարկն անհաջող էր Առոնյանի համար: Նա պարտվեց Կրամնիկին, ապա ոչ-ոքի խաղաց Մաքսիմ Վաշիե-Լագրավի հետ: 17-րդ տուրում հայ շախմատիստը հաղթեց Կարուանային, ապա հաշտություն կնքեց Կարյակինի հետ ու առավելության հասավ Սվիդլերի նկատմամբ: 20-րդ տուրում Ռաջաբովին պարտվելուց հետո Առոնյանը 5 անընդմեջ հաղթանակ տարավ՝ հաջորդաբար առավելության հասնելով Մամեդյարովի, Էլյանովի, Գրիշչուկի, Պոնոմարյովի եւ Մովսիսյանի նկատմամբ: Ցավոք վերջին 3 տուրերում նա վաստակեց ընդամենը կես միավոր, այլապես ավելի մեծ կլիներ Լեւոնի առավելությունը մոտակա մրցակիցների նկատմամբ: 26-րդ տուրում հայ գրոսմայստերը հաշտություն կնքեց Գելֆանդի հետ, ապա պարտվեց Կառլսենին ու Մամեդովին:

Սերգեյ Մովսիսյանը երեկ ավելի հաջող խաղաց՝ վաստակելով 7,5 միավոր: Նա 12,5 միավորով 15-րդ տեղում է:

# ՀՀ հավաքականն առաջադիմել է մեկ տեղով



**ՖԻՖԱ-ի դասակարգման նոր ցանկում ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը 517 միավորով 59-60-րդ տեղերն է բաժանում Նոր Զելանդիայի ընտրանու հետ: Հիշեցնենք, որ դասակարգման նախորդ ցուցակում մեր ընտրանին հանգրվանել էր իր համար ռեկորդային՝ 60-րդ հորիզոնականում:**

**Լավագույն տասնյակում 1-9-րդ տեղերը զբաղեցրած հավաքականները պահպանել են իրենց դիրքերը: Իսկ ահա 10-րդ տեղում գտնվող Ռուսաստանի հավաքականը նահանջել է 13-րդ հորիզոնական՝ տեղը զիջելով Եգիպտոսի ընտրանուն: Դասակարգման ցուցակը գլխավորում է աշխարհի չեմպիոն Իսպանիայի հավաքականը, որին հաջորդում են Հոլանդիայի, Բրազիլիայի, Գերմանիայի, Արգենտինայի, Անգլիայի, Ուրուգվայի, Պորտուգալիայի, Խորվաթիայի եւ Եգիպտոսի ընտրանիները:**

**Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից ամենաբարձր վարկանիշն ունեն ռուսները, որոնք 13-րդ տեղում են: Մեր հավաքականից բարձր տեղեր են զբաղեցնում նաեւ Ուկրաինան (36-րդ), Բելառուսը (40-րդ) եւ Լիտվան (46-րդ): Ամենամեծ առաջընթացն ունեցել է Գրենադայի հավաքականը, որը 34 հորիզոնականով բարձրացել է ու զբաղեցնում է 91-րդ տեղը:**

# Մրցակիցները հայտնի են

Նիոնում կայացած վիճակահանությամբ Հայաստանի մինչեւ 19 տարեկանների աղջիկների ֆուտբոլի հավաքականը Եվրոպայի 2012-ի առաջնության ընտրական մրցաշարի առաջին փուլում ընդգրկվել է 6-րդ խմբում: Մեր հավաքականի մրցակցուհիներն են Ավստրիայի, Իտալիայի եւ Մակեդոնիայի ընտրանիները: Ընտրական մրցաշարի հանդիպումները տեղի կունենան 2011-ի սեպտեմբերին Մակեդոնիայում: Ընդհանուր առմամբ ընտրական առաջին փուլին մասնակցում են 40 հավաքականներ, որոնք բաժանվել են 10 խմբի:

Հաջորդ փուլ դուրս կգան խմբերում լավագույն արդյունքի հասած 2-ական հավաքականներ, ինչպես նաեւ 3-րդ տեղը զբաղեցրած հավաքականներից լավագույնը: Ընտրական 2-րդ փուլում 21 լավագույններին կմիանան Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի հավաքականները: Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլը կանցկացվի 2012-ի հուլիսի 2-14-ը Թուրքիայում:

# Որոշվեցին «Արդար խաղի» հաղթողները

ՀՖՖ-ն ամփոփել է «Արդար խաղի» մրցույթի արդյունքները: Բարձրագույն խմբի առաջնությունում մրցանակին է արժանացել երկրի չեմպիոն «Փյունիկը», որի ֆուտբոլիստները բոլորից քիչ կարգապահական խախտումներ են թույլ տվել: «Փյունիկը» վաստակել է բոլորից շատ՝ 8,09 միավոր: Հաջորդ տեղերում են «Միկան»՝ 7,85, «Բանանցը»՝ 7,71, «Կիլիկիան»՝ 7,70, «Իմպուլսը»՝ 7,67, «Ուլիսը»՝ 7,66, «Գանձասարը»՝ 7,63 եւ «Շիրակը»՝ 7,50:

Առաջին խմբի մրցաշարում մրցանակի դափնեկիրը «Բանանց-2-ն» է՝ 8,08 միավոր: Հաղթողին շատ չնչին միավորներով զիջեց բարձրագույն խմբի ուղեգիր նվաճած «Արարատը»՝ 8,07: Լավագույն եռյակը եզրափակեց «Փյունիկ-3-ը»՝ 8,05:

# Լոնդոնը սպասում է թենիսիստներին

Նոյեմբերի 21-ին Լոնդոնում կմեկնարկի տղամարդկանց թենիսի աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունը, որի պարգեւները կվիճարկեն 8 ուժեղագույն թենիսիստները: Վիճակահանությամբ նրանք բաժանվել են երկու խմբի: A խմբում ընդգրկվել են Ռաֆայել Նադալը, Նովակ Ջոկովիչը, Թոմաշ Բերդիխը եւ Էնդի Ռոդիկը: B խմբում պայքարի մեջ կմտնեն Ռոջեր Ֆեդերերը, Ռոբին Սոդերլինգը, Էնդի Մարեյն ու Դավիթ Ֆերերը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# «Ոչ թե ծնողներիս եմ սպանել, այլ երկու սատանայի»

## *Արմանն իրեն «Աստծո որդի» էր համարում, ծնողներին` սատանայի հետեւորդներ*

Սեւան քաղաքի Նալբանդյան փողոցի 11 շենքի բակում արդեն մի քանի օր անսովոր եւ սարսափելի լռություն է տիրում: Բակի բնակիչները պատմում են, որ ամբողջ քաղաքը սարսափած ու ցնցված է ծնողասպան զավակի գործողություններից: Նոյեմբերի 8-ին ժամը 16-ի սահմաններում 23-ամյա Արման Թորոսյանը սպանել է ծնողներին` 64-ամյա Խաչիկ եւ 57-ամյա Մարիետա Թորոսյաններին: Դեպքի վայրում ոստիկանները հայտնաբերել են ամբողջովին արյունոտված գազի բալոն: Հենց սկզբից կատարվածը որակվեց սպանություն կրոնական հիմքի վրա: Եթե սկզբում դրանք ընդամենը խոսակցությունների կամ հարեւանների պատմածների մակարդակով էին, ապա մի շարք փաստեր համադրելով ակնհայտ դարձավ, որ սպանության շարժառիթը կրոնական է:

Այժմ գործը նախաքննության փուլում է եւ գտնվում է ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սեւանի բաժնում: Արման Թորոսյանն արդեն անցել է հոգեբուժական փորձաքննություն. արդյունքները պարզ կդառնան մեկ ամիս անց: Ոստիկանությունում հրաժարվեցին որեւէ տեղեկատվություն տրամադրել` հավելելով, որ դա կխանգարի գործի ընթացքին

«Մենք չենք իմացել, որ նա աղանդավոր է: Նրանց ընտանիքը ոչ մեկի հետ չէր շփվում: Սովից իրար կերան, ցամաք հացով էին ապրում: Արմանը միայն գիշերներն էր դուրս գալիս փողոց: Փակ երեխա էր, ընկերներ չուներ: Նա արդեն մի տարի արեւի երես չէր տեսնում, ցերեկներն անգամ պատշգամբ դուրս չէր գալիս: Սարսափում եմ, թե ինչպիսի ատելությամբ ու դաժանությամբ է նա ծնողներին սպանել: Նրանց մարմիններն այլանդակված վիճակում էին: Անհնար է, որ զավակն այդքան ատեր իր ծնողներին», պատմում է Արմանի հարեւանուհի Դուխիկ տատիկը:

Մեկ այլ հարեւանուհու` տիկին Համեստի նկարագրմամբ` Արմանը շատ խելացի տղա էր, սակայն նրա խնդիրները սկսվեցին, երբ նա գնաց բանակ:

«Ընդամենը 6 ամիս ծառայեց: Չհասկացանք, թե նրա հետ ինչ կատարվեց, նրան բերեցին հոսպիտալ, հետո վաղաժամկետ ազատեցին ծառայությունից: Արմանը խելոք, չխոսկան տղա էր, աշխատանք էր փնտրում, բայց ապարդյուն. ոչ ոք աշխատանքի չէր վերցնում: Առանց որեւէ մեկին խանգարելու, մի կողմ քաշված ապրում էր: Հետո չհասկացանք, թե այդ տղայի հետ ինչ կատարվեց: Ո՞վ դրդեց, սադրեց, որ այդ խելոք տղան խանութից գողություն անի: Նրան հաստատ սովորեցրել էին», հիշում է տիկին Համեստը:

Արմանի գողացածը մի քանի հազար դրամ էր ու մի շիշ հյութ: Ոստիկանության հարցաքննության ժամանակ ծնողները հայտարարեցին, որ իրենց տղան հոգեկան խնդիրներ ունի, եւ պատժախցի փոխարեն Արմանը հայտնվեց Սեւանի հոգեբուժական հիվանդանոցում:

«Դրանից հետո տնից համարյա դուրս չէր գալիս: Ոչ ոքի հետ չէր խոսում, ընկերներ չուներ», պատմում են հարեւանները:

Հոգեբուժարանում Թորոսյանն անցկացրեց 24 օր: «Եթե նրա առողջական վիճակը վատ լիներ, ազատ չէինք արձակի: Մի քանի բժշկից բաղկացած հանձնաժողովը որոշեց, որ Թորոսյանը հանրության համար վտանգավոր չէ, հոգեկան խանգարումներ չունի, հետեւաբար հոգեբուժարանում մնալն անիմաստ էր: Բուժման ընթացքում նրա մոտ հավատքի հետ կապված արտառոց որեւէ երեւույթ չենք նկատել, սակայն հետագայում հրաժարվում էր գալ բուժզննման, չէր օգտվում հոգեբանի ծառայությունից: Կարծում եմ` նա աղանդավորական այն խմբին է պատկանում, որ մերժում է բժշկությունը», ասաց Սեւանի հոգեբուժական հիվանդանոցի բուժգծով փոխտնօրեն Արամ Ալեքսանյանը:

Սեւանի այժմ լուծարված թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն Անահիտ Ավետիսյանն էլ չի հիշում, որ դպրոցական տարիներին Արմանն աչքի ընկներ տարօրինակ վարքով: Ուսուցիչներն էլ պատմում են, որ Արմանն, ի տարբերություն եղբոր, խելացի աշակերտ էր:

«Չեմ հիշում, որ որեւէ ուսուցիչ Արմանի մասին արտառոց բան պատմեր: Նրա հոգեկան խանգարվածության նշաններ որեւէ մեկը չի նկատել»:

Արմանի հոգեկան խանգարման նշաններ չեն նկատել նաեւ հարեւանները: Արմանն աչքի էր ընկնում տարօրինակ վարքով, միայնակ էր, լռակյաց, սակայն հոգեկան հիվանդ չէր:

Հարեւանների ներկայացմամբ` մայրը` Մարիետա Թորոսյանը հաճախ է բողոքել կենցաղային վատ պայմաններից: «Նրանց տան հիմնական վեճն այն էր, որ Արմանը չէր աշխատում», պատմում է տիկին Համեստը:

Նոյեմբերի 7-ի գիշերը Թորոսյանների տանը կրկին անհանգիստ էր: «Տանն անընդհատ աղմկում էին, իրար վրա գոռում, հայհոյում: Մայրը փորձում էր հանգստացնել որդուն, բայց ապարդյուն»:

Երբ Համեստը աշխատավայրից վերադարձել է տուն, պատուհանի մոտ տեսել է Արմանին, որ անհանգիստ շարժումներ էր անում: Հարեւանուհուն դա զարմացրել է. Արմանը երբեւէ պատուհանի մոտ չէր կանգնել, անգամ փողոց դուրս չէր գալիս: «Նրանք սովորաբար դուռը կողպում էին, բայց այդ օրը կիսաբաց էր: Երբ դուռը հրեցի, տեսա, որ միջանցքի պատն ամբողջությամբ արյունոտված է: Վախեցած մտա տուն եւ դուռը կողպեցի»:

Այդ ժամանակ Արմանն աստիճաններով իջնում է ու հեռանում: Որոշ ժամանակ անց հարեւանների զանգից հետո ոստիկանները շրջապատում են շենքն ու սկսում հարեւաններին հարցաքննել: «Այդ ժամանակ հանկարծ Արմանը հայտնվեց: Նրա դեմքն այնքան հանգիստ էր ու բավարարված` կարծես ոչինչ չի պատահել: Ոստիկանների հարցին` ում տղան ես, ասաց` Աստծո», հիշում է տիկին Համեստը:

Ոստիկանության բաժանմունքում էլ քննիչի հրահանգին` «ներկայացիր», Թորոսյանը պատասխանել է «Ես Արման Թորոսյանն եմ, Աստծո որդին»:

«Ինչո՞ւ ես սպանել ծնողներիդ» հարցին էլ հավելել. «Նրանք իմ ծնողները չեն: Ոչ թե ծնողներիս եմ սպանել, այլ երկու սատանայի: Նրանք ուզում էին ինձ սատանայախաբ անել, ես էլ նրանց սպանել եմ: Իմ հայրն Աստվածն է, ես Աստծո որդին եմ»:

Այս դեպքը պետք է անհանգստացնի ոչ միայն Հայ առաքելական եկեղեցուն, այլեւ պետությանը: Այս պարագայում այդքան էլ էական չէ, թե Արմանը կրոնական որ աղանդին է հետեւել` Եհովա, հիսունականներ, մորմոններ, թե հոգեգալստականներ, նրանց բոլորի ուսմունքն էլ նույնն է` զոմբիացնել մարդուն եւ կառավարել:

Այս պարագայում քաղաքացիները պետության պաշտպանության կարիքն են զգում: Աղանդավորների հանդեպ մեր «ժողովրդավար» դիրքորոշումը սկսում է նմանվել աչքակապության: Հարկավոր է պայքար սկսել նրանց դեմ, պետական ծրագիր մշակել, մասնագետների, ոստիկանների ու քահանաների աջակցությամբ ազատվել այդ կեղտից: Եթե այսօր եհովայականներն են հրաժարվում, վաղն էլ հիսունականներն ու մորմոնները կհրաժարվեն` ասելով, թե իրենց ցուցակներում Արման Թորոսյաններ չկան, սակայն կհրաժարվեն նաեւ իրենց կազմակերպության իրական անդամների ցուցակը տրամադրել:

Նախաքննությամբ փաստերը կբացահայտվեն ու պարզ կդառնա, թե Արմանը աղանդավորական որ որջում է մշակվել ու վերածվել մարդկային արտաքինով տականքի: Այդ ժամանակ կրոնական այդ կազմակերպությունը պետք է արդարադատության առաջ կանգնի, մեղավորներն էլ պետք է պատժվեն:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Սեւան-Երեւան**

ՌԵՊԼԻԿ

# Արտագաղթի գրասենյակ... Գրողների միության շենքում

**Ընդամենը երկու տասնամյակ առաջ ամենավատ երազում իսկ կարելի չէր երեւակայել, թե Հայաստանի գրողների միության շենքում կհանգրվանի ու անարգել կգործի հայոց հայրենիքից արտագաղթի գրասենյակ: Պարզվում է, որ արժեչափերը գլխիվայր շուռ եկած մեր ժամանակներում ամեն ինչ էլ հնարավոր է, եթե մարդիկ, այս դեպքում` ՀԳՄ ղեկավարները, ծախել են իրենց խիղճն ու արժանապատվությունը:**

**Չգիտեմ, թե վերջին ամիսներին ՀՀ-ում տեղի ունեցած «համահայկական» միջոցառումների մասնակից սփյուռքահայ մարդիկ (ուսուցիչներ, գրողներ, լրատվամիջոցների աշխատակիցներ եւ այլք) եղե՞լ են Երեւանում Գրողների տանը, տեսե՞լ են զազրելի ցուցանակը ու լռել` այդպիսով հանցակից դառնալով ՀԳՄ 350 հոգանոց պատկառելի անդամներին, որոնք եւս լռում են ի տես այդ ցուցանակի` չմոռանալով պատեհ-անպատեհ մրոտել ու խոսել ՀՀ-ից արտագաղթից ու նրա աղետալի հետեւանքներից: Միգուցե նրանք այդ ցուցանակը չեն տեսել, քանի որ տեղադրված չի եղել... Ինչեւէ:**






**Երկու շաբաթ առաջ, մի գրողի այցելելու համար Գրողների տուն մտնելիս, միջոցառումների հայտարարություններին կից մեկ այլ ցուցանակում կարդացի Green Card վերտառությամբ մի ծանուցում ու... արյանս ճնշումը միանգամից բարձրացավ: Մի պահ չհավատացի տեսածիս. Հայաստանի գրողների միության շենք-սրբարանում նման պղծությո՞ւն: Բայց ոչ` ճիշտ էի տեսնում: Ավելին. ներքեւում նշված էր, որ «Գրին քարտի» ձեւակերպումները կատարվում են շենքի 4-րդ հարկում, իսկ մանրամասնությունները նշվել էին... ռուսերենով: Ահա՛ թե ինչպես է հարգում ՀԳՄ-ն Մեսրոպ Մաշտոցն ու նրա մեծագույն սխրանքը` հայոց հավիտենական ինքնապաշտպան 36 տառանշանների ստեղծումը կամ վերստեղծումը: Այսքանից հետո մի՞թե կեղծավորություն չեն ամեն տարի Մաշտոցի օրերգմանի մոտ ՀԳՄ նախագահի խոսքերը հայոց ամենասուրբ սրբի մասին...**

**Ի՞նչ անեի: Նախ` ռուսերեն գրության վրա սոսնձած կպցրեցի մոտս միջես եղող մի թերթիկ, որում տպված է, թե ըստ ՀՀ սահմանադրության 12-րդ հոդվածի, ՀՀ պետական լեզուն հայերենն է, որը, ըստ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Այնուհետեւ, բարձրանալով 4-րդ հարկ, մեծ հուսախաբությամբ ստեղծեցի` ՀԳՄ անդամներին ամոթանք տալով, ընելով, թե շենքի ծառայողներ իսկ ոսկի եթե առաջարկած լինեին, նման բնույթի գործունեություն ծավալող որեւէ գրասենյակ չպիտի տեղ ունենար այս շենքում, որտեղ ելումուտ են արել Համո Սահյանը, Շիրազը, Կապուտիկյանը, Սեւակը եւ Հայոց Հայրենիքն ու Հայոց լեզուն պաշտած մեր շատ ու շատ մեծերը: Իմ բարձրացրած աղմուկի պատճառով թե պատահաբար 4-րդ հարկում հայտնված ՀԳՄ քարտուղարներից Հովհաննես Գրիգորյանը փորձեց արդարանալ, զարմանք հայտնելով, թե այդ ինչպե՞ս է եղել, որ ինքը հարյուրավոր անգամ շենք ելումուտ է արել ու այս ցուցանակը չի նկատել...**

**Այս մասին գրեցի «Լուսանցք» շաբաթաթերթի ս. թ. 12-18 նոյեմբերի համարում` «Մտավորակա՞ն է Լեւոն Անանյանը» վերնագրով (կարելի է կարդալ www.hayary.org-ում): Ինչպես նաեւ զանգեցի Հալեպ` Թորոս Թորանյանին, որը մի քանի տարի առաջ նույն ցուցանակը (այդ օրերին` թղթե) տեսնելով` կատաղությամբ պատառոտել էր...**

**Եվ ի՞նչ փոխվեց: Արեւմտահայը պիտի ասեր. «Բարով խերով չընէի»: Ընդամենը հաշված ժամեր անց օտարալեզու ցուցանակը վերացավ, փոխարենը հայտնվեց... է՛լ ավելի զազրելի բովանդակությամբ հետեւյալ ցուցանակը. «Միգրացիոն ծրագրեր Կանադա, Ավստրալիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ - ձախից IV հարկ (հեռախոսահամար)»: Այսինքն, եթե «Գրին քարտով» միայն դեպի ԱՄՆ արտագաղթն էր քաջալերվում, հայերեն ցուցանակով դեպի չորս պետություն արտագաղթի ծառայություններ են առաջարկվում...**

**Տեղեկացնելով այս պղծության մասին` կոչ եմ անում հայրենաբնակ եւ սփյուռքահայ խղճմտանքով մտավորականներին` իրենց բողոքի ձայնը բարձրացնել ի տես հայ գրողի եւ առհասարակ հայ մտավորականի կոչումը ոտնահար անող այս երեւույթի ու պահանջել կա՛մ դուրս շպրտել ՀԳՄ շենքից, կա՛մ` ՀԳՄ ղեկավարությանը` նմանների մուտքը այդ սրբարան իսպառ բացառելով:**

**Մի՛ պղծեք Գրողների տունը: Դրա իրավունքը որեւէ մեկը ՉՈՒՆԻ:**

**ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՃՅԱՆ**

# BBC լրատվական հեռուստաալիքը` Orange-ի բջջայինով

Առաջին անգամ Հայաստանում բաժանորդները կարող են դիտել BBC World News համահայտ լրատվական հեռուստաալիքն անգլերեն լեզվով անմիջապես իրենց բջջայինից Orange TV-ի միջոցով:

Orange-ի բջջային հեռուստատեսությունը Հայաստանում հնարավոր է դիտել ոչ միայն 3G, այլ նաեւ 2G հեռախոսների միջոցով Orange-ի ողջ ծածկույթում:

Orange TV-ի հեռուստաալիքների փունջն այսօր ներառում է 10 տեղական եւ 9 միջազգային հեռուստաալիքներ: Orange-ը շարունակելու է ընդլայնել Orange TV-ով հասանելի հեռուստաալիքների ցանկը` տրամադրելով բաժանորդներին ավելի մեծ հնարավորություններ եւ միջոց առաջարկելով նրանց հետաքրքրական հեռուստաալիքներ:

Orange TV ծառայության մանրամասներին, ինչպես նաեւ փաթեթում ներառված մյուս հեռուստաալիքների ցանկին կարելի է ծանոթանալ www.orangearmenia.am/mobile/services/entertainment/Orange-TV/ էջում:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրված` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրված է տպագրության` 17.11.2010, գինը` 100 դրամ, տպագրվում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակյան 28: